

891.99

U-53



~~Upper by the sea~~

~~12~~



Հասարակական Արգար Դրեգորեան Արուխանցի.

ԲԱԳՐԱՏ ԱՅՎԱԶԵԱՆՑ

# ՍԱՍՈՒՆԸ ԱՅՐԻՈՒՄ Է

Դրամա 5 գործողութեամբ

80  
172-43

Թ Ի Փ Լ Ի Ս  
Տպարան «ԷՍՊԵՐԱՆՏՕ» Ելիզ. 17.  
1913



20 JAN 2006

Հրատարակութիւն Արգար Գրիգորեան Արուեանցի 8 NOV 2011

89099  
ԱՔ ԱՅ 53

ԲԱԳՐԱՏ ԱՅԱՎՁԵԱՆՑ




ՄԱՍՈՒՆԸ ==  
== ԱՅՐԻՈՒՄ Է

1001  
330

Դրամա 5 գործողութեամբ

Անցքը պատահում է 1894—1896 թ. Սասունում:



Տպարան «Էսպերանտո» Ելիսաբեթին. փողոց, 17

1913



Къ постановкѣ пьесы на армянскомъ языкѣ подѣ заглавіемъ „Сасунъ Горитъ“ др. въ 5 дѣйств. соч. Баграта Айвазянца на сценахъ Кавказскаго края препятствій со стороны Комитета не встрѣчается.

Членъ Тифлискаго Комитета по дѣламъ печати Калантаровъ.

25-го сентября 1912 года.

Настоящая пьеса подѣ заглавіемъ „Сасунъ Горитъ“ соч. Б. Айвазянца разрѣшена Намѣстникомъ Его Императорскаго Величества на Кавказѣ для представленія на сценахъ края (отзывъ канцеляріи за № 22210—912 г.) 10 октября 1912 года гор. Тифлисъ.

И. Д. Предѣдателя Комитета В. Колобовъ.

М. П.

Секретарь А. Гунія.

«Սասունը Այրում է» պիեսայի ներկայացնելը թույլատրում է ամեն տեղ այն պայմանով, որ հեղինակի հոնորարը նահանգական քաղաքներում ընդհանուր մուտքի (водовой сборъ) 15% և գաւառական քաղաքներում 10%-ը ուղարկել հեղինակին: Հակառակ դեպքում զանցառուները կենթարկուին օրինական պատասխանատվեան: Հեղինակի հասցեն՝ Тифлисъ, Приказная ул. № 12. Баграту Айвазянцу.

#### Законъ объ авторскомъ правѣ

620. Виновный въ умышенномъ нарушеніи чужого авторскаго права наказывается: арестомъ или денежною пеней не свыше пятьсотъ рублей.

31. Передѣлка повѣствовательнаго произведенія въ драматическую форму или драматическаго произведенія въ повѣствовательную форму безъ согласія автора или его наслѣдниковъ не допускается.

47. Авторское право на драматическое произведеніе заключаетъ въ себѣ также исключительное право на публичное исполненіе сего произведенія.



# ՎՐԱՅ ԱԶՆՈՒԱԿԱՆՆԵՐԻ ԹԱՏՐՈՆ

Երկուշաբթի, Նոյեմբերի 19-ին 1912 թ.

Հայ դրամատիկ գերասանների ընկերակցութիւնը

Ղեկավարութեամբ ԱՄՕ-ԽԱՐԱԶԵԱՆԻ

Կըներկայացնէ առաջին անգամ նոր ինքնուրոյն դրաման

## Սասունը Այրում է

Դրամա 5 գործ. հեղ. Բ. Այվազեանի

ԴՈՐԺՈՂ ԱՆՁԻՆՔ

|                                       |              |
|---------------------------------------|--------------|
| Սրբօ, տանուտէր Սասունի . . . . .      | Ստեփանեան    |
| Խաթուն, նրա կինը . . . . .            | Մալգարիտ     |
| Կարօ { սրանց որդիքը . . . . .         | Ամօ-Խարազեան |
| Եղսօ { . . . . .                      | Մարի         |
| Հուսէյին բէկ . . . . .                | Հայկազեան    |
| Լէյլի, Հուսէյին բէկի աղջիկը . . . . . | Նինուէլ      |
| Քրիստինէ, զպրոցի վարժուհի . . . . .   | Արաքսեան     |
| Քրդերի շէյխը . . . . .                | Բաբեան       |
| Քուրդ . . . . .                       | Նոնիկ        |
| Արսէն, Կարօյի ընկերը . . . . .        | Ն Ն          |

Քրդեր, Սասունցիք, զօրք և այլն.

Րէժիսսօր՝ ԱՄՕ-ԽԱՐԱԶԵԱՆ

Սկիզբն է ճիշտ 8 ժ. երեկոյեան

ՆՈՅՆ ԹԱՏՐՈՆՈՒՄ

Նոյն խումբը ներկայացրեց երկրորդ անգամ  
Զորեքշաբթի 30 Յունվարի 1913 թուին:

# Բ Ա Գ Ո Ի

ՅԻՐԿ-ԹԱՏՐՈՆ ԵՂՔ. ՆԻԿԻՏԻՆՆԵՐԻ

Հինգշաբթի, Դեկտեմբերի 6-ին 1912 թ.

Բազմայ Հայոց Կ. Միութեան Գեղարւեստ. Սեկցիայի

հայ դրամատ. գերաս. ընկերութիւնը ղեկավարութեամբ

Տ. ՍԻՐԱՆՈՅԵԻ

Կը ներկայացնէ

## Սասունը Այրում է

Դրամա 5 գործ. հեղ. Բ. Այվազեանի

ԱՆՁԻՆՔ.

|                                   |                  |
|-----------------------------------|------------------|
| Սրբօ, Սասունի տանուտէրը . . . . . | Միրզոյեան        |
| Խաթուն, նրա կին . . . . .         | Աղնիւ            |
| Կարօ { սրանց որդիքը . . . . .     | Ոսկանեան         |
| Եղսօ { . . . . .                  | Արուս-Ոսկանեան   |
| Հուսէյն բէկ . . . . .             | Անդրանիկ         |
| Լէյլի, նրա աղջիկը . . . . .       | Արաքս            |
| Քրիստինէ, հայ վարժուհի . . . . .  | Ստեփանեան-Ճարալ. |
| Քրդերի շէյխը . . . . .            | Չարիֆեան         |
| Քուրդ . . . . .                   | Ալլահվերդեան     |
| Արսէն, Կարօյի ընկերը . . . . .    | Ռշտունի          |

Սկիզբն է երեկ. ճիշտ 8<sup>1</sup>/<sub>2</sub> ժամ.

ՅՈՒՇԱՐԱՐ ԹՈՐՈՍԵԱՆ:





## ԱՌԱՋԻՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ

Պարտէզ—ծաղկանոց: Մի կողմը հովանոց շրջապատած ծաղիկներով: Հովանոցի մէջ նստարաններ, սեղան: Քրիստինէն նստած կար է անում իսկ Կարոն ծխախոտ ծխելով շրջում է: (Երեկոյեան վերջալոյս):

### Տ Ե Ս Ի Լ Ա.

Քրիստինէ. Ես, ճշմարիտն ասած, զարմանում եմ քեզ վրայ: Դու կարծես թէ դպրոցական աշխարհում մի տեսակ յեղափոխութիւն ես ուզում գցել:

Կարօ. (Կանգ առնելով) Ի՞նչպէս... Զարմանում ես ինձ վերայ: Միթէ դու տակաւին չը հասկացար ինձ և այդ պատճառով հակառակ ես իմ այն գործողութիւններին, որպիսին ես մտցնում եմ մեր գիւղի դպրոցում:

Քրիստինէ. Օ, ոչ Կարօ, այդ մտքովդ անգամ մի անցկացնի: Քայլ առ քայլ հետեւելով քեզ, ես զգում և ըմբռնում եմ, որ մեր դպրոցներում հէնց այդ ուղղութիւնն է պէտք և օգտակար ինչպիսին դու ես մտցնում: Թէ չէ այն սխտեմը, այն ուղղութիւնը որով զեկամարում

են մեր դպրոցները շատ աննպատակ և ապարդիւն է մեր մանուկների համար:

Կարօ. Ես էլ հենց այդ կէտը ի նկատի ունիմ, սիրելի Քրիստինէ: Երևակայիր, Եւրոպայում շատ դպրոցներ շրջեցի, շատ ուղղութիւններ ուսումնասիրեցի և վերջը ոչ մի կէտի վրայ կանգ չառնելով, ուզեցի իմ հայրենական գիւղում իմ ուղղութեան մի դպրոց պահել, որը օգտաւէտ լինի մանուկներին կեանքի մէջ: Այդ տեսակ դպրոցներին ես անուանում եմ կեանքի դպրոց կամ գործնական դպրոց և ահա այդ ուղղութեամբ ես ուզում եմ առաջ տանել գործը, իսկ թէ ի՞նչ կը լինի դրա արդիւնքը, այդ ապագան ցոյց կը տայ:

Քրիստինէ. Այդ ապագան շատ փայլուն և արդիւնաւոր կը լինի: Ես այդ արդէն դուշակում եմ և զգում: Բայց պարզիր ինձ քո ծրագիրը, որ ես ևս կարողանամ մի որոշ գաղափար կազմել:

Կարօ. Ծրագրիս մէջ ոչ մի փիլիսոփայութիւն չկայ, սիրելի Քրիստինէ: Ուրախ եմ որ դու էլ հետաքրքրւում ես իմ ծրագրով: Ես իմ ծրագիրը զխաւորապէս հիմնում եմ երկրի արդիւնաբերութեան և գործնական կեանքի վրայ: Մեր արդի դպրոցները, ինչպէս քեզ յայտնի է, ոչ մի զբաղմունք արդիւնք չեն տալիս և այնտեղից դուրս եկող սերունդը կեանքի մէջ ոչ մի բանի պիտանացու չէ լինում: Վերցրու որ դպրոցն



ուղղում ես թէ տարրական և թէ միջնակարգ։ Այդ տեղերից աւարտած երեխաները կեանքի մէջ ոչ մի գործնականութիւն չեն ստանում և նրանց սովորածները մեռնում են կեանքի մէջ այնպէս, որ կարծես ամենեին սովորած չլինեն։

Քրիստինէ. ի՞նչպէս, մի՞թէ դու դէմ ես այն բոլոր գիտութիւններին, ինչ որ անցնում են դպրոցներում։

Կարօ. Մեծ մասամբ այո և ահա թէ ի՞նչու. բայց նախ քան այդ հարցի պատասխան տալը, ես քեզ մի ուրիշ հարց կը տամ, որպէս զի աւելի շօշափելի լինի իմ ծրագրի էութիւնը։

Քրիստինէ. Ասա, ես պատրաստ եմ պատասխանել քեզ, որքան կարող եմ։

Կարօ. Ի՞նչ է հարկաւոր մարդուն ամենից առաջ։

Քրիստինէ. (ծիծաղելով) Ի՞նչպէս թէ ի՞նչ է հարկաւոր։ Շատ բան։

Կարօ. Ո՛չ, ամենաանհրաժեշտը, ամենակարեւորը, առանց որի չի կարող ապրել մարդս։

Քրիստինէ. Հաց։

Կարօ. Ապրես, դու լաւ պատասխանեցիր։ Մարդուս համար ամենաանհրաժեշտը հացն է։ Առանց հացի մարդ չի կարող ապրել և ահա մենք ամենից առաջ պէտք է աշխատենք մարդուն հաց տալ, ապրեցնել նրան և ապա հեռուն մտածել։ Այդ հացը սիրելի Քրիստինէ, ձեռք է բերւում աշխատանքով, քրանքով։ Պէտք է քր-

տինք թափել, աշխատել որ հաց ձեռք բերուի. իսկ այդ հացը տալիս է մեզ երկրի արդիւնաբերութիւնը։ Ասա խնդրեմ, ի՞նչ միտք ունի փիլիսոփայութիւնը, ճարտասանութիւնը և հազար ու մի չոր ու ցամաք գիտութիւնները, երբ մարդ սոված է, հաց չունի և նրա գոյութիւնն է վտանգուած։ Մանուկին հենց փոքրուց գոյութեան կուրի մասին պէտք է զաղափար տալ, սովորցնել նրան ապահովութեան, աշխատանքի և ապա թէ ձգտի մասնաւոր գիտութիւններին։

Քրիստինէ. (հեգնելով) Ուրեմն դու մատերեալիստ ես, նիւթապաշտ։ Օ՛, ես այդ բանը քեզանից չէի սպասում։

Կարօ. Մի հեգնիր, սիրելի Քրիստինէ, և լաւ հետեւիր իմ խօսքերին և ուղղութեանը։ Այդ ժամանակ դու այն եզրակացութեան կը գաս, որ ես ամենեին մատերեալիստ չեմ այլ աւելի զաղափարական, իդէալական։

Քրիստինէ. Բայց քո այդ գործողութիւնից չէ երևում, որ դու իդէալիստ ես, զաղափարական. որովհետեւ դու առաջին պայմանը, առաջին կէտը նշանակում ես հացը, այն, ինչ որ ձեռք է բերւում դրամով։

Կարօ. Այո հացը։ Հէնց իմ առաջին պայմանն է հացը։ Հաց տուր մարդուն, ապրեցրու նրան և ապա մտածիր զաղափարի մասին։ Քաղցած փոքրին իդէալ պէտք չէ և մեռած մարդուն զաղափար։ Հացի, ապահովութեան վրայ են



հիմնուած ընտանիքների և պետութիւնների բարեկեցութիւնն ու ազատութիւնը: Եւ այնտեղ ուր չկայ այդ ապահովութիւնը, այդ հացը, այնտեղ չի կարող լինել ապահով և երջանիկ կեանք: Սովի ճիւղաններում չի ծնւում երջանկութիւնը և ազատութիւնը. անապահով վիճակի մէջ մեռնում են հարիւրաւոր զիւտեր և հանճարներ: Եւ ահա ես էլ այդ ուղղութեանը հետեւելով, ուզում եմ մատաղ սերունդը կրթել այն հոգով, որ նա կեանքի մէջ ապահով ապրի, դառնութիւններ չճաշակի:

Քրիստինէ. Բայց դրանք կարող են այդ հոսանքով տարուել և կեանքի մէջ հեռուն գնալ նիւթապաշտութեան մէջ: Այդ ժամանակ կը մեռնի ազնիւ ձգտումը, գաղափարը, գիտութիւններն ու ճարտարապետութիւնը:

Կարօ. Ամենեւին ոչ: Քրտնքով աշխատած հացի հետ ինչպէս արիւն և ոսկր ձեռք կը բերեն ազնուութեան և քաղաքակրթութեան սերմերը, որոնք ապագայում աւելի կամրապընդունին: Նայիր հենց իմ ձեռակերտը: Ահա մեզ դուների փեթակը, ծաղկանոցը, կաթնատնտեսութեան և երկրագործութեան նոր տեսակի գործիքները, վերջապէս պատուաստած մրգատու ծառերը: Ամեն հասակի համար այստեղ գործ կայ, սկսած փոքր մանուկից մինչև հասակաւորը: Այդ բոլոր գործերը երկրի արդիւնաբերութեանն են նպաստում: Աշխատաւոր ձեռ-

քերի արդիւնք են և քրտնքի վաստակ: Ես չեմ ընդունում այն սխտեմը, այն ձեւը, որ ընդունուած է մեր զպրոցներում, որը ըստ իմ կարծիքի կործանարար ազդեցութիւն է ունենում մեծամասնութեան վերայ: Պարզեմ միտքս: Մեր մէջ ընդունուած է որ ծնողը՝ զլիսաւորապէս հայրը, պարտական է սնունդ հայթայթել իւր ընտանիքի համար, մինչև նրանց հասունացնելը, այսինքն մինչև գործի գնալը: Այդպիսով բազմապատկառ ընտանիքի հայրը ծանր բեռան տակ քաշկուտում է իւր կեանքը և լուռ սպասում, որ իւր որդիքը հասունանան և իւր բեռը թեթեացնեն: Երեւակայեցէք թէ այդ երկար ու ձիգ տարիններում ինչ զուր էներգիա է կորչում: Մանուկը եօթը տարեկանից մինչև 18—20 տարեկան հասակը հազիւ աւարտելով միջնակարգ դպրոցը, հազիւ կարողանում է օգնութեան հասնել իւր ընտանիքին: Մինչդեռ իմ սխտեմը այդպէս չէ: Երեխան հէնց մատաղ հասակից սովորում է օգնութեան գալ իւր ընտանիքին և միացած միւս անդամների հետ, ձեռք ձեռքի տուած առաջ տանել ընտանիքի նիւթակալն բարեկեցութիւնը: Վերջնենք օրինակ կաթնատնտեսութիւնը: Երեխան երբ դպրոց է մտնում, նա բացի առարկաների դասերից պէտք է սովորի և կաթնատնտեսութիւն և այն փորձնական եղանակով: Նա պիտի պանիր, իւղ, մածուն պատրաստելու դասեր ընդունի և սովորի ինքը պատրաստել և



այդպիսով անմիջական գործնական աջակցութիւն ցոյց տայ ընտանիքի բարեկեցութեան համար:

*Քրիստինէ.* Շատ բարի, գիւղերում մանուկները միջոց ունին երկրի արգիւնաբերութիւնով պարապելու, իսկ քաղաքներում ի՞նչ տեսակի դպրոցներ կը ցանկանայիր որ ունենայինք:

*Կարօ.* Քաղաքներում... Այնտեղ կարելի է ծաղկեցնել արհեստները՝ կոշկակարութիւնը, ոսկերչութիւնը, ատաղձագործութիւնը, մեքենայութիւնը և հազար ու մի արհեստներ: Ասացէ՛ք խնդրում եմ ի՞նչ են տալիս ներկայիս մեր դպրոցները: Համարեա ոչինչ: Մանուկները 5—6 տարի դպրոցական պատերի մէջ անցկացնելուց յետոյ, դուրս են շարտւում փողոց և կեանքի համար ոչ մի նշանակութիւն չեն ունենում: Շատ շատերը այդ տեսակներից տարիներ շարունակ թափառում են անգործ և ծանր բեռ դառնում իրենց ընտանիքների վերայ մինչև որ բազմի բերմունքով մի տեղ են գտնում և կեանքի, աշխատանքի փորձառութիւնը առաջին աստիճաններից սկսում:

*Քրիստինէ.* Այո համակրելի է այդ ուղղութիւնը մանաւանդ մեր օրիորդների համար: Ներկայ դպրոցները իրենց սիստէմներով կեանքի համար ոչ մի նպատակի չեն հասցնում մանաւանդ մեր օրիորդներին, որոնք իսկապէս ընտանիքի հիմնաքարն են կազմում: Ես ընդունում

եմ որ մեր օրիորդներին լաւ մայրեր պատրաստելու համար բացի մտաւոր պաշարը, հարկաւոր է տալ նրանց նաև գործնական փորձառութիւն: Այդ այն է, որ նրանք անշուշտ և անպայման պէտք է տանտիկնութիւն գիտենան, կարել, կարկատել, եփել, լուանալ և առհասարակ այն, ինչ որ պէտք է ընտանիքի բարեկեցութեան համար:

*Կարօ.* Ապրե՛ս, իմ ուղղութիւնն էլ հենց այդ է: Ի՞նչ բարեկեցութիւն կարող է լինել մի ընտանիքի մէջ, երբ հայրը եզան չափ աշխատում է իսկ կինը իրա գուարճութեան հետեից ընկած շահագործում է իւր ամուսնու քրտինքը, աշխատանքը: Մինչդեռ եթէ երկուստեք լինէր աշխատանք, մարդը իւր տեղում, կինը իւր, այն ժամանակ այդ ընտանիքը կը կադմէր երջանկութեան մի օղակ: Ընդունելով հանգերձ, որ աշխատանքի հետ նաև կը թաղաւորէր սէրը: Այդ օղակներից կազմում են ազգութիւնները և ամբողջ մարդկութիւնը: Տուէ՛ք մեր անդամներին մտաւոր թէ փորձնական աշխատանքներ և այն ժամանակ վերջ կը դրուեն անգործների և պարագիտների շարաններին, որոնք վերջերս այնքան շատացել են:

*Քրիստինէ.* Այո, լաւ, համակրելի ծրագիր է բայց կատարումը շատ դժուար, մանաւանդ այն երկրում ուր դու սկսել ես, սիրելի Կարօ, դժուար թէ յաջողութեամբ պսակուի մեր այս ծրագիրը:



Կարօ. Դու ասում ես դժո՞ւար ծրագիր է։ Այո, դժո՞ւար է բայց ուր քեզ նման շունչ և հողի փշող օրիորդներ կան, այնտեղ ես դժո՞ւարութիւն չեմ տեսնում։ Մի մոռանար, որ դու հանգիստ և անդորր կեանքը թողնելով, ինձ հետեւելով եկար այս վայրենի երկրում կուլտուրա մտցնելու։ Քո այդ քայլը ինձ այնքան ոգևորեց, որ ես ոչ մի դժո՞ւարութեան առաջ կանգ չեմ առնի։

Քրիստինէ. Բայց մեզ շրջապատող կիսավայրենի ցեղերը՝ քուրդն ու թուրքը, ասորին ու արաբը մի՞թէ թոյլ կը տան վայելել մեր քրտնքի պտուղները։

Կարօ. Օ, ես աներկբայ եմ, սիրելի Քրիստինէ, նրանք մեզ արգելք չեն կարող լինել մեր ձեռնարկութիւններին։

Քրիստինէ. Տայ Աստուած այդպէս լինի։ Երկու տարի է արդէն մեր ձեռնարկութիւնը յաջող է անցնում, բայց չարագուշակ լուրերը ինձ շատ յուզում են։

Կարօ. Դրանք դատարկ լուրեր են և ոչ մի նշանակութիւն չեմ տալիս իսկ ինչ վերաբերում է մասնակի աւազակութիւններին, որոնք կատարւում են քուրդերի ձեռքով, նոյնպէս դատարկ բաներ են։ Ասացէք խնդրեմ ձր երկրում չեն կատարւում մասնակի աւազակութիւններ։

Քրիստինէ. Ամեն տեղ, բայց ոչ այն չափով ինչպէս մեր երկրում։ Այստեղ կեանքի և գոյքի

ապահովութիւն կարծես ամենեւին գոյութիւն չունի և ես վախենում եմ, որ մեր այս գեղեցիկ ձեռնարկութիւնը քրդի ու թուրքի աչքի փուշը դառնայ։

Կարօ. Օ, ոչ, մի վախենայ, իմ սիրելի Քրիստինէ, ապրի Սասունը։ Նա գիտէ պաշտպանել իւր պատիւն ու գոյքը։ Կեանքի փորձառութեամբ այդ ճիւղը այստեղ շատ առաջ է գնացած և ես շատ ուրախ եմ։ Միայն դու խօսք տուր, որ մենք ամեն ճիշդ կ'թափենք մեր գաղափարն իրագործելու և մինչև վերջ տանելու։

Քրիստինէ. Այդ մասին կարող ես միամիտ մնալ։ Ես տալիս եմ իմ ազնիւ խօսքը։ Մենք կը գործենք միասին ու անբաժան։

Կարօ. (Առաջ գալով) Ես այժմ երջանիկ եմ ու հանգիստ։ (Համբուրում է ձեռքը)

## Տ Ե Ս Ի Լ Բ.

Ներսէ վազում Լէյլին մի փունջ ծաղիկներ ձեռքին և նկատելով Կարոյի համբուրելը, յանկարծ կանգ առնում, մոայլում և խոժոր հայեացքով Քրիստինէին նայում։

Կարօ. Մօտ արի, Լէյլի, ի՞նչու յանկարծ այդպէս կանգ առար։

Լէյլի. Ես... ես... յանկարծ կանգ առայ, որովհետև օրիորդին չուզեցայ խանդարել... բայց տես, Կարօ, քեզ համար ինչ սիրուն ծաղիկներ եմ ժողովել։ Գիտե՞ս այդ մեր դաստակերտից



չէ: Ես լեռների վրայից եմ ժողովել և այնքան հոտաւէտ, այնքան անուշ են որ...

Կարօ. (Շոյելով դուրս) Իմ անեման, իմ սիրուն Լէյլի, դու լաւ աղջիկ ես:

Լէյլի. Բայց դիտե՛ս, ես քո բոլոր ծաղկանոցը արդէն ջրել եմ:

Կարօ. Գիտեմ, դու աշխատաւոր աղջիկ ես: (Նստում է):

Քրիստինէ. Այո, այո, Լէյլին լաւ, աշխատաւոր աղջիկ է:

Լէյլի. Օ, ես սիրում եմ աշխատել: Շատ, շատ աշխատել: Առաւօտից մինչև մութ գիշեր, որովհետև իմ տէրն էլ սիրում է աշխատել: Այ, երբ ես տեսնում եմ Կարոյի մեղուների փեթակը, նրա ծաղկանոցը, ուղղակի հիանում եմ: Ես լեռները վազեցի բայց այնտեղ այդ տեսակ ծաղիկներ չ'տեսայ: Սրանք էին ամենալաւերը որ ես կարողացայ ժողովել: (Նստում է Կարոյի ոտների մօտ):

Կարօ. Ապրես, Լէյլի, շատ շնորհակալ եմ քեզանից: Ես քեզ համար կառնեմ մի այնպիսի ընծայ, որ դու էլ գոհ լինիս ինձանից: Բայց դու վեր կաց, ոտքերիս տակ մի նստիր:

Լէյլի. (Փարելով) Օ... ոչ, իմ տէր, ինձ համար այնքան դուրաւի է ոտքերիդ տակ փառուելը: Մի խանգարիր, իմ երջանիկ բոպէները սրանք են:

Կարօ. (Ժպտալով) Ձէ, Լէյլի, այդպէս չի կարելի թէ և ես քո տէրն եմ, բայց դու չ'պիտի



այդպէս վարուես: Ես արգելում եմ քեզ: Վեր, գնա Խաթունին ասա մեզ համար ընթրիք պատրաստէ: Ես սոված եմ:

Լէյլի. (Վեր թռչելով) Եթէ Կարօն չի բարկանայ ես ինքս կը պատրաստեմ, այնքան լաւ, այնքան անուշ, որ նա գոհ մնայ: Գիտե՛ս, Կարօ, Քրիստինէն ինձ կերակուր պատրաստել է սովորեցրել:

Կարօ. Ապրես, Լէյլի: Դու լաւ աշակերտուհի ես: Գնա, ինքդ պատրաստիր:

Լէյլի. Այս բոպէյիս, այս բոպէյիս... Օ, ինչքան ես ուրախ եմ: (Դուրս է վազում):

Քրիստինէ. Տեսա՞ր, Կարօ, Լէյլի աչքերի մէջ վառուող հուրը: Նա կարծես թէ...

Կարօ. Ի՞նչ:

Քրիստինէ. Նա կարծես սիրահարուած լինի քեզ վրայ:

Կարօ. Այո, նա սիրում, յարգում է ինձ ինչպէս եղբօրը: Ուրախ եմ, որ լեռների քուրդ աղջկայ բերտ վարժունքը մեղմացել է և նրա սրտի մէջ ատելութեան փոխարէն սէր առաջացել:

Քրիստինէ. Բայց դու չէ՞ս վախենում նրա սրտի մէջ բորբոքուող կրակից:

Կարօ. Օ, ամենևին ոչ: Այդ սէրը եղբայրական սիրուց դէնը չի անցնի: Բայց միթէ դու արդէն նախանձուեցիր... Օ, իմ սիրելի Քրիստինէ, այդ սէրը, որի մասին դու խօսում ես,



իմ սրտի մէջ բուռն թափով նստած է միայն  
քեզ համար և ուրիշ ոչ մէկը չի կարող բռնել  
և դուրս վանել իմ սրտից:

### Տ Ե Ս Ի Լ Գ.

Ներս է մտնում Սրգոն:

Սրգո. Լէյլի, բայց ո՞ւր է նա, ես բան  
պէտք է հարցնեմ:

Քրիստինէ. Նա նոր դուրս գնաց, հայրիկ,  
մեզ համար ընթրիք պատրաստելու:

Կարօ. Բայց ի՞նչ պէտք է հարցնէիր:

Սրգո. (Նստում է՝ չիբուխը հանում է և լցնում):  
Բայց այս անպիտան քրդերից ոչինչ չես հաս-  
կանայ: Մարդ չի իմանում թէ ի՞նչ է պատահել,  
որ մէկ մէկ թողնում են ու հեռանում:

Քրիստինէ. Ի՞նչ, հայրիկ, մի՞թէ էլի նոր  
լուրեր կան:

Սրգո. Այո և խիստ խորհրդաւոր լուրեր:  
Մեր ծառան՝ քուրդ Հուսէյնը այլևս մեզ մօտ չէ  
ուզում մնալ: Նա հեռանում է իւր ընտանիքով  
և Լէյլիին էլ հետը տանում:

Կարօ. Ի՞նչպէս, բայց այդ անհաւատալի է:

Սրգո. Ինչպէս ուզում էք կարծեցէք, բայց  
նա հեռանում է: Իմ ոչ մի յորդորը նա բանի  
տեղ չ'դրեց: Գլխի մէջ մի այնպիսի մեխ է  
ցցել, որ հանել անկարելի է:

Քրիստինէ. Բայց ի՞նչով է բացատրում  
նա իւր հեռանալը: Մի՞թէ նա դժգոհ է իւր  
վիճակից:

Սրգո. Բանն էլ այդ է, որ նա չէ ուզում  
պատճառը յայտնել: Տասն երկար տարիներ մեզ  
մօտ ծառայելով դժգոհութեան ոչ մի նշան չէ  
ցոյց տուել իսկ հիմա, յանկարծ, թողնում է  
մեզ և իբր թէ Ստամբուլ գնում: Ի՞նչու, այդ  
չէ ասում և ես ուզում էի այդ խոստովանքը  
Լէյլիից ստանալ:

Կարօ. Զուր, հայրիկ, թող վարուեն այնպէս  
ինչպէս իրենք են ուզում: Ուժով պահել դրանց  
պէտք չէ: Բայց սպասիր, ես ինքս խօսեմ հետը:  
(Անցնելով մի կողմը) Լէյլի, այ Լէյլի:

### Տ Ե Ս Ի Լ Գ.

Ներս է մտնում Լէյլին:

Լէյլի. Ի՞նչ է, Կարօ, դեռ ընթրիքը չեմ  
պատրաստել, մի փոքր էլ և պատրաստ կը  
լինի:

Կարօ. Դրա համար չեմ կանչում, Լէյլի:  
Լսիր, հայրդ վերադարձաւ դաշտից թէ՞ ոչ:

Լէյլի. Այո, վերադարձաւ: Նա նոր մտաւ  
իւր սենեակը հանգստանալու:

Կարօ. Կանչիր այստեղ:

Լէյլի. Իսկոյն: (Դուրս է գնում):



Քրիստինէ. Դրանց հեռանալը ես լաւ բանով չեմ բացատրում:

Կարօ. Իսկ ես ոչ մի նշանակութիւն չեմ տալիս:

Քրիստինէ. Դու միշտ լաւատես ես, Կարօ, տայ Աստուած որ լաւ լինի սակայն ես չարագուշակ բան եմ նկատում:

Սրգօ. (նստելով) Այո, Կարօն միշտ լաւ կողմն է տեսնում, իսկ վատը չէ ուզում տեսնել: Նա կարծում է թէ ինքը կեանքը լաւ է ուսումնասիրել և հօր փորձառու խօսքերին աւանջ չէ դնում:

Կարօ. Հայր, դու կրկին քո տրտունջները յայտնեցիր:

Սրգօ. Իմ տրտունջներն եմ յայտնում, որովհետեւ ես վտանգ եմ տեսնում քո ձեռնարկութիւնների մէջ:

Կարօ. Ի՞նչպէս, ի՞նչ վտանգ: Բայց մինչև հիմա ոչինչ չէիր ասում այդ մասին:

Սրգօ. Ձէի ասում, որովհետեւ այն ժամանակ վտանգը այնպէս ակներև չէր, իսկ հիմա այդ վտանգը ակներև է, համարեա որոշ և պարզ է ինձ համար:

Քրիստինէ. Դու վախեցնում և յուսահատեցնում ես, հայր, ասա ի՞նչ վտանգ է սպառնում մեզ:

Սրգօ. Մասնաւորապէս ձեզ ոչ մի վտանգ չէ սպառնում, այդ մասին կարող էք միամիտ

մնալ: Վտանգը երկրին է սպառնում, մեր Սասունին: Մեր երկնակամարի վրայ թուխպ ամպեր են կիտուում, որոնք հետզհետէ մռայլում և սպառնալից դիրք են բռնում: Նա վախենում եմ, որ մի պայծառ օր այդ ամպերը կը տրաքուեն և զարհուրելի հետեանք կունենան Սասունի համար:

Կարօ. Պարզիր, հայր, թէ ի՞նչ սպառնալից ամպեր են ժողովում Սասունի գլխին: Էլ ի՞նչու համար ենք ապրում, որ չկարողանանք այդ ամպերը ցրել:

Սրգօ. Ձեզ արդէն ասացի իմ երկիւղի պատճառը: Քրդերի մեր երկրից չուելն է դա, որ ինձ մտախոհութեան մէջ է գցել: Տասնհինգ տարի է ես ռես եմ մեր գիւղին և այդպիսի խորհրդաւոր չուել չեմ նկատել: Ինչ որ չարագուշակ բան եմ նկատում դրանց մէջ և այդ միտքը չար որդի նման կրծում է սիրտս:

Կարօ. Նւ դրա համար դու դէմ ես մեր ձեռնարկութեան, հայր, զուր երկիւղ քո կողմից:

Սրգօ. Այո, ի՞նչ դրա համար: Դու մեր երկիրը լաւ չես ճանաչում: Այս զուլում երկրում ամեն բարի ձեռնարկութիւն արմատ չի բռնի և կը կործանուի: Քուրդն ու թուրքը այստեղ հայի վրայ նայում են ինչպէս իրենց ոչխարի վերայ, որոնց բուրդը պիտի խուզեն: Նրանք երբէք հաշտ աչքով չեն կարող նայել



երբ հայի անդաստանը ծաղկում ու բարգաւա-  
ճում է, իսկ թէ ձեզ նման լուսամիտ երիտա-  
սարդները ինչ գին ունեն քրդի և թուրքի աչ-  
քին, այդ դուք լաւ պիտի հասկանաք:

Կարօ. Նրանք մեզ ոչինչ չեն կարող անել,  
ինչ հայեացքով էլ նայեն մեզ վրայ:

Սրգօ. Այդ ապագան ցոյց կը տայ, որդի,  
դու դեռ անփորձ ես: Կրկին խորհուրդ եմ տա-  
լիս ձեզ ձեր «կեանքի դպրոցը», դաստակերտը,  
ձեր կուլտուրան և հեռանալ այս երկրից քանի  
որ ուշ չէ:

Կարօ. (Բռնոն) Ո՛հ, հայր, այդ անկարելի է:  
Սկսած գործս թերի չեմ թողնի եթէ երկնքից  
կրակ էլ թափուի: Ես, ինչպէս հայրենիքիս զա-  
ւակ, պարտաւոր եմ ոսկորներս թողնել հայրե-  
նիքիս համար և եթէ հարկը ստիպի կռուել  
մինչև վերջին շունչը:

Սրգօ. Դու գիտես, բայց ահա Հուսէյնը:

### Տ Ե Ս Ի Լ Ե.

Ներս է մտնում Հուսէյնը:

Հուսէյն. Ի՞նչ էք ուզում ինձնից:

Կարօ. Հուսէյն, ինձ ասացին, որ դու ու-  
զում ես հեռանալ մեզնից, արդեօք դա ճիշտ է:

Հուսէյն. Այո, ճիշտ է, վաղը առաւօ-  
տուանից ես իմ ընտանիքով ճանապարհ եմ  
ընկնելու:

Կարօ. Ինչո՞ւ, ի՞նչ պատճառով: Ձլինի թէ  
քեզ մի բանով նեղացրել են:

Հուսէյն. Օ՛, ոչ, ամենեին: Այդ Ալլահի  
կամքն է միայն: Ես պէտք է գնամ:

Կարօ. Դու քաջ մարդ ես և ես գոհ եմ  
քեզանից:

Հուսէյն. Շնորհակալ եմ: Բաւական է ինչ  
ծառայեցի այժմ գնում եմ Ստամբուլ փաղիշահի  
մօտ ծառայելու: Փաղիշահը հրաման է արել  
քրդերին ժողովուել և դուռնդ կազմել և մենք  
պարտաւոր ենք լսել նրա հրամանը:

Քրիստինէ. Բայց չէ՞ որ այդ քո կամքից է  
կախուած: Եւ եթէ ուզենաս կարող ես չգնալ:  
Ի՞նչու դու քո հանգիստ կեանքը փոխում ես  
պատահական կեանքի:

Հուսէյն. Հանգիստ կեանքը... Ոչ, խանութ,  
մենք չենք կարող հակառակուել մեր փաղիշահի  
հրամանին: Ամենքը գնում են և ես էլ պէտք է  
գնամ:

Կարօ. Դու գիտես, մենք ուժով չենք կա-  
րող քեզ պահել:

Հուսէյն. Այո, ես պէտք է գնամ և ոչ ոք  
ինձ ուժով չի կարող պահել: (Դուրս է գնում):

### Տ Ե Ս Ի Լ 2.

Սրգօ, Կարօ, Քրիստինէ:

Քրիստինէ. Տեսա՞ր, Կարօ, նրա խօսքերի  
շեշտերը, մոլի հայեացքը, կոպիտ վերաբեր-



մունքը: Աչքերից կարծես դժոխքի կրակներ էին ցայտում: Այդ քրդերին որքան կուտուրացնես այնուամենայնիւ արեան հոտ է փչում նրանցից:

Կարօ. Այո, ես էլ համոզուած եմ կամաց կամաց, որ դրանց համախմբուելը և գունդ կազմելը ինչպէս Հուսէյնն է ստում, ինչ որ խորհրդաւոր նշանակութիւն է ստանում:

Սրգօ. Եւ մեզ հայերիս համար խիստ վտանգաւոր:

Կարօ. Մեզ ոչ մի վտանգ չեն կարող սպառնալ, հայրիկ, թող համախմբուեն, թող զինուեն, մեզ ի՞նչ փոյթ: Չէ որ Սասունը ամուր է և անառիկ:

Քրիստինէ. Եւ դու կարծում ես: Իսկ ո՞ւր կը մնայ քո կուտուրան, քո կեանքի դպրոցը, քո ձեռնարկութիւնները: Մեր երկիրը երբ արեան և կրակի ասպարէզ կը դարձնեն այն ժամանակ կ'ոչնչանան տարիների ընթացքում մեր քրանաթոր վաստակները:

Կարօ. Սասունը ազատ ապրել է և ազատ էլ կը մնայ: Նա չի ձկի իւր վիզը և ես կեանքս կը զոհեմ նրա պաշտպանութեան համար:

Սրգօ. (Ծխելով) Դու դեռ ջահել ես, որդի, և կեանքը, մեր սև ու գուլում կեանքը չես հասկանում: Քուրդը ինչքան լուսաւորուի իւր աւագակային հակումները չի թողնի: Լաւ նկատեց Քրիստինէն, ամեն լաւ ձեռնարկութիւն, այստեղ միշտ վտանգի մէջ է և մենք չգիտենք թէ վաղը ի՞նչ կարող է տեղի ունենալ:

Կարօ. Ի՞նչ, դուք ուզում էք յուսահատեցնել ինձ, իմ ձեռնարկութիւնից ետ կանգնեցնել...

Սրգօ. Ամենեին ոչ: Բայց նախ և առաջ տեղական հանգամանքները պէտքէ ուսումնասիրել և ապա այնպէս գործ սկսել: Այն ուղղութիւնը ինչպիսին դուք սկսել էք, այստեղ չի յաջողուի, չի պատուաստուի: Դրանք լուսաւոր երկիրներում կարելի է յաջողացնել, իսկ մեզ ուրիշ ուղղութիւն է պէտք:

Կարօ. Ի՞նչ, հայրիկ, ի՞նչ ուղղութիւն:

Սրգօ. Քաջութեան և զէնքի: Աւարառութիւններից Սասունը ազատ է եղել միմիայն իւր քաջերի շնորհիւ, որոնք զէնքի շնորհիւ կարողացել են զսպել քրդերի ախորժակները: Մ... եթէ այդ չլինէր, վաղուց քո դաստակերան էլ ոչնչացրած կը լինէր:

Կարօ. Բայց օրէ՞նքը, կառավարութիւնը:

Սրգօ. Սուլթանի՞ կառավարութիւնը: Դա ոյժի և անիրաւութեան կառավարութիւն է, ուր ամեն աղնիւ ձեռնարկութիւններ ոչնչանում են:

Կարօ. Ինչ ուզում ես ասա, հայր, բայց ես Քրիստինէի հետ մինչև վերջին շունչ կը կռուեմ մեր գաղափարի համար: Նայիր, տես, ահա մեր գաղափարի պտուղը. տես, Լէյլին ինչպէս է աշխատում մեզ համար ընթրիք պատրաստելու, խաւարի մէջ լուսոյ բողբոջներ են արձակում և այդ մութ խաւարը հեազհետէ ցրում: Եւ միթէ մենք կիսաճանապարհից պէտք է ետ



դառնանք: Օ՛հ, ոչ մեռնենք էլ փոյթ չէ, գոնէ այդ խաւարի մէջ կը թողնենք լուսոյ կաթիլներ և թող զարգանայ կուլտուրան:

Սրգօ. Որդիք, փախէք այս գուլումի երկրից, երիտասարդ կեանքերդ դուր վտանգի մի ենթարկէք ու խաւարի մէջ լուսոյ բողբոջներ մի փնտռէք: Դարեր կանցնեն մինչև որ խոպան երկիրը կը փափկի, արեան ու աւարի հետքերը կ'ոչնչանան:

Լէյլի. (Դրսից): Հացը արդէն պատրաստ է: (Սրգօն ուղղում է գնալ):

Կարօ. (Յուզուած) Ո՛հ, հայր, քո որդին իւր հայրենական օջախից չի փախչի, եթէ իսկ այնտեղ կրակ ու հուր լինի տարածուելիս: Ես կը ֆնամ այստեղ, իմ հայրենի երկրում. իմ փայփայած գաղափարներս կը սերմանեմ հայրենիքիս խոպան երկրում... Գնանք Քրիստինէ... (Ձեռքը տալիս է Քրիստինէին և դուրս են գնում):

### Տ Ե Ս Ի Լ Է.

(Բեմը ֆնում է մի փոքր դատարկ, յետոյ ներս են մտնում Հուսէյնը և Լէյլին):

Հուսէյն. Լսիր, Լէյլի, ժամանակը արդէն հասել է և դու ամեն բան պիտի իմանաս:

Լէյլի. Ի՞նչ, հայրիկ, ի՞նչու դու այդպէս խորհրդաւոր ես: Այս վերջին ժամանակներս

դու ինչ որ յուզուած և մտածկոտ ես երևում: Հուսէյն. Այո, աղջիկս, ես շատ յուզուած եմ, որովհետեւ տանջանքի ու նեղութեան օրերը արդէն վերջացան և շուտով մեզ համար արշալոյս պիտի բացուի:

Լէյլի. Ես քեզ չեմ հասկանում:

Հուսէյն. Լսիր, ամեն ինչ կը հասկանաս: Ստրկութեան ժամանակը վերջացաւ և փաղիշահի հրամանով ես թողնում եմ գեաւուրների տունը և Ստամբուլ գնում: Թող օրհնեալ լինի Ալլահի անունը: Փաղիշահը խոստացել է ինձ բէկութիւն տալ և ամբողջ Սասունը իմ տրամադրութեանը յանձնել:

Լէյլի. Ի՞նչպէս, ուրեմն մենք գնում ենք այստեղից:

Հուսէյն. Այո, առաւօտ վաղ: Թող մեր տէրերը հանգիստ ընթերիք ուտեն, իսկ դու գնա, իրերդ ժողովիր և մենք հեռանանք այս գեաւուրի տնից:

Լէյլի. Բայց այստեղ լաւ էր...

Հուսէյն. (Ընդհատելով) Լուռ կաց և ոչ մի աւելորդ խօսք: Դու, Լէյլի, մինչև հիմա ծառայի աղջիկ էիր, իսկ Ալլահի հրամանով այսուհետեւ բէկի աղջիկ կը դառնաս: Գնա, շուտ և բերանիցդ ոչ մի խօսք չ'թողնես:

Լէյլի. Բայց Կարօն... Խանութիւնը...

Հուսէյն. Սուս, ոչ մի խօսք... Գնա: (Լէյլին դուրս է գնում: Առաջ գալով): Ո՛հ, երբ ես փաղիշահի հրամանով բէկ կը դառնամ և կը վերադառնամ



այստեղ, այն ժամանակ դառնութեան թոյնը կը  
թափեմ այս գեաւուրներէ վրայ և քար քարի  
վրայ չեմ թողնի: Տարիներ շարունակ սրտիս  
մէջ ամբարտաւած դառնութեան թոյնը դուրս կը  
ժայթի ինչպէս մի հրաբուխ և այն ժամանակ  
վայ գեաւուրներին... (Առաջ գալով, սպառնական):  
Ձգուշացէք, գեաւուրներ, փախէ՛ք, անիծուած  
հայեր, Հոսէյն բէկն է գալիս:

Վ. Ա. Բ. Ա. Գ. Ո. Յ. Բ.:



## ԵՐԿՐՈՐԴ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ

Տեսարանը ներկայացնում է Սասունի լեռները:  
Հեռում գիւղ: Բեմի մօտ Սրգոյի խրճիթի մուտքը:  
Մուտքի առաջ նստած է Խաթունը և գուլպայ  
է գործում: Եղսօն կուժը վերցրած ուզում է աղ-  
բիւր գնալ:

Տ Ե Ս Ի Լ Ա.

Խաթուն և Եղսօ:

Խաթուն. Կաց, աղջի, մի գնա:

Եղսօ. Մայրիկ, ես աղբիւրն եմ գնում ջուր  
բերելու: Տես, մի կաթիլ ջուր չկայ, պապական  
լեզուներս զովացնելու:

Խաթուն. Ա՛խ, դու մի գնա: Թո՛ղ, ես կեր-  
թամ դէպի աղբիւրը, ուր զուլումն է պտտում,  
և քրդի ու թուրքի կրքով լի աչքերը որս փըն-  
տում: Դու չ'լսեցի՞ր, անցեալ օրը Մարութանց  
աղջկան են փախցրել, Սերեթանց ոչխարը զարկել,  
տարել: Օ՛, աղջիկս, եթէ քեզ մի դժբաղ-  
տութիւն պատահի, քո մայրիկը էլ չի ապրի,  
նա վշտից կը մեռնի:

Եղսօ. (Շփոթուած կուժը ցած է դնում) Մայրիկ,  
այդ ինչեր ես ասում, դու ինձ վախեցնում ես:

Խաթուն. (Առաջ գալով և համբուրելով աղջկան):  
Նստի՛ր մօտս, Եղսօ ջան: Ես կարծես կարօտ



եմ քո սիրուն աչքերին նայելու: Ա՛խ, այն սոսկալի երազը աչքերիցս արցունքներ է քամում ու սիրտս կտոր կտոր անում:

Նղսօ. Ի՞նչ երազ, մայրիկ, մի՞թէ դու երազ ես տեսել: Պատմիր, ես ուզում եմ ամեն բան իմանալ:

Խաթուն. Պատմեմ, պատմեմ: Մինչև հիմա ես պահում էի ոչոքի ոչինչ չէի յայտնում. սակայն այդ երազը ինչպէս մի սոսկալի որդ, ահա երբորդ օրն է, որ ինձ տանջում է. և ես այլևս ոյժ չունիմ պահելու նրան: Սև դառնայ մեր տէրտէրի սիրտը: Նրան յայտնեցի թէ ես երազ եմ տեսել, նա գիրը բաց արաւ նայեց, կարդաց ու ծանր հեալով ասաց: «Օ, Խաթուն մայրիկ երազը խիստ ահաւոր ու չար է և երբորդ օրն է կատարուելու»:

Նղսօ. Եւ այսօր երբորդ օրն է չէ՞ մայրիկ: Ահա ես քո սիրոյն այս օր տանից չեմ դուրս գնայ, որ չարը խափանուի ու բարին առաջանայ: Բայց ի՞նչ տեսար, մայրիկ, պատմիր:

Խաթուն. Երազումս տեսայ ես կանգնած էի մի անդունդի եզրին: Մութ, ահաւոր գիշեր էր. անդունդի խորքից լսում էին սոսկալի մոնչիւններ, իսկ երբեմն երբեմն այնտեղից կրակի ահագին քուլաներ էին դուրս թռչում և գալով վեր լիզում այն ժայռը, ուր կանգնած էի ես: Գեհներ կարծես իւր մահաշունչ բերանն էր բացել և ուզում էր կռւլ տալ ինձ: Ես կծկուել էի այդ ժայռի գրլ-

խին, ուզում էի փախուստ տալ, բայց ոչ մի կողմը ճանապարհ չկար: Ամեն կողմը անյատակ վիհն էր տարածում ու մութն ու սև խաւարը տիրապետում:

Նղսօ. Ո՛հ, մայրիկ, ինչքան սոսկալի բաներ ես պատմում:

Խաթուն. Լսիր ինձ: Դեռ քարացած կանգնած էի ժայռի գլխին, երբ իմ ուշադրութիւնը գրաւեց անդունդի միջից լսող հեծկտանքի ու հառաչանքի ձայները: Ես ճիգ արի, սիրտս ամբարցրի ու ցած նայեցի: Սարսափից քիչ ֆնաց ես ինքս ընկնէի մէջը: Այնտեղ հազարաւոր մանուկներ, կիւն թէ մարդ, աղջիկ թէ տղայ գանուկներ, կիւն թէ ծանր տանջանքների մէջ ու սրբաւոր հառաչանքներ արձակում: Ես ինձ հաշիւ չէի կարող տալ թէ ի՞նչ էր ներկայացնում այդ անդունդը, երբ յանկարծ մի սոսկալի պայթիւն լսուեց. և անյատակ անդունդից դուրս թռաւ մի հրէշ, անթիւ գլուխներով, կրակէ աչքերով: Կատաղի հայեացքով նա ինձ նայեց ու պնչերից կրակէ քուլաներ թողնելով սլացաւ դէպի ինձ: Այդ ժամանակ, դու, սիրուն Նղսօ ջան, չգիտեմ որտեղից «մայրիկ օգնիր» ասելով ոտքերիս փաթաթեցիր, բայց ես ինչ կարող էի անել: Սրտի կսկծից խելքս էի թուցրել, երբ ամենի հրէշը վրայ վազեց, դուրս պոկեց իմ ձեռքերից քեզ ու նորից սլացաւ դէպի անդունդը: Քիչ էլ անցաւ. այն ժայռը, որի վրայ կանգնած էի



ես, փուլ եկաւ ու ես էլ ընկայ անդունդը: Երբ  
ես զարթեցի առաւօտեան, քրտինքը պատել էր  
մարմինս և լոյսը նոր էր բացուում:

Եղսօ. Արդարեւ, մայրիկ, զարհուրելի է երազդ:  
Ես այժմ վախենում եմ:

Խաթուն. Դուրս մի գնայ, աղջիկս, մի քանի  
օր տանը մնայ, որ չարը անցնի: Ո՞վ գիտէ ի՞նչ  
կարող է պատահել: Ա՛խ, եթէ եղբայրդ այստեղ  
լինէր, ես ոչոքից չէի վախենալ: Նա հարկւրին  
պատասխան կը տար. բայց ինչ կարող է անել  
հայրդ մենակ:

Եղսօ. Բայց Կարօն շուտով գալու է չէ՞,  
մայրիկ:

Խաթուն. Այո, նա Մուշ գնաց մի քանի  
կարևոր գործեր կարգի դնելու: Այսօր կամ վա-  
ղը նա այստեղ կը լինի: Բայց առ, այս գուլ-  
պան դու գործիր ես ինքս աղբիւր կերթամ  
ջուր բերելու:

Եղսօ. Գնա, մայրիկ, միայն շուտ արի:  
Դու ինձ վախեցրիր: Ես երկար միայնակ չեմ  
կարող մնալ: Աղբիւրի մօտ երկար կանգ մի  
առնիլ. կանանց հետ զրոյցի մի մտնիլ:

Խաթուն. (Կուժը վերցնելով): Չէ, սիրուն աղ-  
ջիկս, չէ, իմ աննման բալաս: Ես շուտ կը դառնամ:  
(Դուրս է գնում):

### Տ Ե Ս Ի Լ Բ.

Եղսօ. (Միայնակ, գուլպայ գործելով): Ա՛խ, ի՞նչ  
է գուշակում արդեօք մօրս տեսած երազը:

Միթէ դեռափթիթ կեանքս պիտի խաւարի ու  
ես օր ու արեւ չտեսած պիտի իջնեմ սև, մոլթ  
գերեզման: Օ՛... Մարաթուկի սուրբ Աստուա-  
ծածին, խնայիր մատաղ կեանքս, դժբաղտու-  
թիւնը հեռացրու ու բարին առաջացրու: (Դուրս  
նայելով): Բայց ահա և հայրիկս է գալիս:

### Տ Ե Ս Ի Լ Գ.

Սրգօ. (Ներս է մտնում, մանգաղը ցած դնելով):  
Բարի երեկոյ, աղջիկս:

Եղսօ. (Փաթաթուկելով): Հայրիկ ջան, ինչքան  
ես քեզ սիրում եմ, պաշտում: Կարծես թէ  
կարօտել եմ քեզ:

Սրգօ. (Աչքերին նայելով): Հ՛ը, աղջիկս, ի՞նչ  
կայ, ի՞նչու աչքերդ կարմրել են: Կարծես դու  
լաց ես եղել: Բայց ո՞ւր է մայրիկդ:

Եղսօ. Ո՛չ, հայրիկ, ես լաց չեմ եղել: Ես  
մենակ էի մնացել ու վախենում էի. օ, այնքան  
վախենում էի, որ կարծես ամեն մի քարի տա-  
կից վիշապներ էին դուրս գալիս, որ ինձ կուլ  
տան:

Սրգօ. Օհօ... Բայց ես քեզանից այդ չէի  
սպասում: Ամօթ է Մասունցու աղջկան վախե-  
նալը: Նա քաջ, իգիթ պէտք է լինի, ինչպէս  
տղամարդ: Բայց դու չասեցիր թէ ի՞նչ է եղել  
մայրիկդ:

Եղսօ. Նա աղբիւր գնաց շուր բերելու: Նա  
շուտով կը վերադառնայ:



(Սրգոն մի քանի անգամ լուռ անց ու դարձ է անում ապա պատից ցած է բերում ատրճաճակը, դնում, նայում և սրբում: Եղսոն հարցական նայում է նրան):

Եղսո. Հայրիկ, ի՞նչու դու գէնքերդ ես սրբում, ի՞նչ է պատահել արդեօք:

Սրգո. Որդիս, գէնքը անբաժան է Սասուն-ցուց և Սասունցիին գէնքից, ի՞նչու ես դարմանում, որ ես գէնքը ցած բերի:

Եղսո. Բայց, հայր, մինչև հիմա գէնքի վրայ այնքան ուշադրութիւն չէիր դարձնում. դաշտն ու անդատանն էր քո սիրելի գործը, իսկ հիմա ի՞նչ է պատահել, որ դու էլ, Կարօն էլ միշտ գէնքի մասին էք մտածում:

Սրգո. Զուլումն է գալիս, աղջիկս, քուրդն ու թուրքն են, որ հայի համար տտամ են սրում ու սպառնում վերջ դնել նրա կեանքին: Եւ անա մենք էլ պէտք է պատրաստ լինենք, որ յանկարծակիի չ'գանք:

Եղսո. Ուրեմն Կարօն ու Քրիստինէն էլ Մուշ գնացին այդ գործի մասին, հայրիկ:

Սրգո. Այո, նրանք գնացին լուր բերելու թէ ինչ է կատարւում մեր երկրում:

### Տ Ե Ս Ի Լ Դ.

Խաթուն. (Շնչառապառ ներս վազելով կուժը մի կողմն է դնում և ծնկներին ձեռքերը դարկում): Ողորմած Աստուած:

Սրգո. (Հարցական նայելով և գօտկի մէջ խրելով ատրճաճակը): Հը, ի՞նչ կայ, Խաթուն:

Խաթուն. Մուշի ճանապարհի վրայ փոշու ամպեր են երևում: Այնտեղից ինչպէս երևում է մի խումբ ձիաւորներ են գալիս դէպի մեր գիւղը: Գիւղացիք ամենքը փախան դէպի տները մտան: Ասում են Հուսէյն բէկն է գալիս, այդ արիւնկներ գազանը: Մեր օջախի անաղուհաց քուրդ ծառան:

Սրգո. Այո, այդ անիրաւ քրդերը ուղիղ պատուհաս դարձան մեզ համար: Անիրաւները ծծեցին մեր վերջին կաթիլ արիւնը և դեռ էլի չկշտացան մեզնից, իսկ մեր ծառայի լրբութիւնը հետզհետէ անտանելի է դառնում: Ինչով կ'վերջանայ այդ, ես ոչինչ չեմ հասկանում:

Խաթուն. (Իմեկով Եղսոյին): Եղսո ջան, ներս մտիր, թագնուիր, կամ հարեանի տուն գնա: Հօ գիտես անիրաւները առաջ հօրդ տունը կը գան: Ռեսի արիւնը կը քամեն:

Եղսո. Ա՛խ, Աստուած, այս վերջին ժամանակներս ինչեր են կատարւում: Մենք մեր տանն էլ հանգիստ չենք կարողանում հաց ուտել: Ահա ես գնում եմ թագնուեմ, անիրաւների երեսը չտեսնեմ: (Դուրս է գնում):

Սրգո. Խաթուն, լսիր, գործը շատ լուրջ կերպարանք է ստանում: Անօրէն քրդերը վերջին ժամանակներս ինչ որ խումբ խումբ գալիս անցնում են, և որս փնտռող շների նման շուր-



ջերը դիտում: Արդեօք ի՞նչ պատուհաս պիտի բերեն մեր գլխին: Ես ոչինչ չեմ հասկանում: Գիւղացիք ինձ ասում են, որ նրանք որոշ տեղերում կենդրոնանում են և յարձակումներ գործում այս ու այն հայ գիւղերի վրայ:

Խաթուն. Այո, այն օրուանից, երբ Հուսէյնը հեռացաւ մեզանից ու բէկ դարձաւ:

Արզօ. Այո, Խաթուն, այն օրերից Սասունի գլխին սպառնալից ամպեր կուտակուեցան, դրա մասին խօսք անգամ չէ կարող լինել: Ես այդ գուշակում էի և այդ ամպերը շուտով կը պայթեն Սասունի գլխին և գուցէ քար քարի վրայ չը թողնեն,

Խաթուն. Բայց դրա առաջը պէտք է առնել թէ՛ չէ:

Արզօ. Այո, պէտք է առնել, բայց ի՞նչով: Նրանք լաւ զինուած են և էլի զինւում են, իսկ մենք ի՞նչով պէտք է դիմադրենք նրանց: Մեր դանակներով թէ՛ մանգաղներով:

Խաթուն. Բայց նրանք մեր արիւնն են քամում, մեր ինչքը յափշտակում, մեր կոյս աղջիկներին առեւանգում:

Արզօ. Այո, համբերութիւնն էլ իւր սահմանն ունի: Եւ մեր կարօն ուզում էր դրանց կուլտուրացնել, խելքի բերել խաղաղ եղանակով, մինչդեռ դրանց ատամներ է հարկաւոր ցոյց տալ, որ խելքի գան: Բայց դեռ համբերում

ենք, տեսնենք ի՞նչով կը վերջանայ դրանց յանդգնութիւնը:

Խաթուն. Բայց ահա երևացին քրդերը, նրանք ուղիղ մեր տունն են գալիս:

Արզօ. Դու ներս գնա, տեսնենք ինչով կաւորող եմ քաղցրացնել նրանց բերանը, որ մի կերպ հեռացնեմ: Ա՛խ ողորմած Աստուած, դու հեռացրու մեզնից պատուհասը: (Խաթունը դուրս է գնում):

## Տ Ե Ս Ի Լ Ե.

Ներս են գալիս Հուսէյն բէկ և քրդեր:

Արզօ. (Խոնարհ գլուխ տալով): Իմ թանկագին հիւրերս, բարի էք եկել, աչքներիս վրայ տեղ ունէք: Է՛յ, ո՞վ կայ այդտեղ, ոչխար մորթեցէք, թանկագին հիւրերին պատուեցէք:

Հուսէյն բէկ. Ռեւս, այդ բոլորը աւելորդ են և ես գեաւուրի հացը ուտելու չեմ եկել: Ասա շուտով ո՞ւր է որդիդ:

Արզօ. (Շփոթուած): Որդիս... Բայց ի՞նչին է պէտք քեզ իմ որդին:

Հուսէյն բէկ. Շո՛ւն, դու դեռ հարցնում ես:

Արզօ. Բէկ, ի՞նչ է նշանակում այդ բոլորը:

Հուսէյն բէկ. (Զայրացած): Ի՞նչ է նշանակում այդ բոլորը կիմանաք: (Դառնալով քրդերին): Տղէ՛ք, կապեցէք այս շանը, որ միւս անգամ չ'համարձակուի յանդուգն խօսել: (Ուզում են կապել):



Սրգօ. Սպասեցէք, ոչ մի քայլ առաջ: (Հուսէյնին) Բէկ, ես ուզում եմ պատճառը իմանալ: Ասա ի՞նչ յանցանք եմ գործել ես կամ որդիս, որ քո զայրոյթն ենք շարժել: Ձէ՛ որ դու մեր աղ ու հացն ես կերել, մեզ մօտ մեծացել: Տարիներ շարունակ...

Հուսէյն քէկ. Լո՛ւիւր, անգգամ, ոչ մի աւելորդ խօսք: Դուք ապստամբներ էք և ես հրաման ունիմ ձեզ կալանաւորելու: Բայց ասա՛, ո՞ւր է որդիդ, որ համարձակուում է վեհափառ Սուլթանի դէմ դաւեր լարել:

Սրգօ. Մենք ապստամբներ... Ի՞նչ ես ասում բէկ, դարերից ի վեր մենք ամենախոնարհ հպատակներն ենք վեհափառ Սուլթանի և ո՞վ է այն յանդուգը, որ մատնացոյց է անում թէ որդիս ապստամբ է: Օ՛, ո՛չ, ողորմած բէկ, դու մեզ լաւ ես ճանաչում, հարիւր անգամ մեր տանը տուն ու դուրս ես արել, մեզ մօտ հիւրասիրուել, մեր հացը կտրել:

Հուսէյն քէկ. (Մտրակով խփելով): Լո՛ւիւր, անիրաւ գեաւուր, դուք բոլորդ էլ շներ էք և վեհափառ Սուլթանի ողորմածութեանը անարժան: Կրկնում եմ, որդուդ տեղը ցոյց տուր թէ չէ կաշիդ քերթել կը տամ:

Սրգօ. (Դիք կանգնելով): Այժմ հասկանում եմ քեզ, Հուսէյն, արա ինձ հետ ի՞նչ կամենաս, բայց որդիս քո ձեռքը չի ընկնի:

Հուսէյն քէկ. (Հեզնաքով): Հ՛ըմ... իմ ձեռքը

չի ընկնի... տեսնե՞ք ինչպէս չի ընկնի, տղերք, մտէք ռեսի տուն, ամեն անկիւն քրքրեցէք, քարուքանդ արէք և ում որ գտնէք, բերէք այստեղ: (Մի քանի քուրդ դուրս են գնում):

Սրգօ. (Յուսահատ): Բէկ, աղաչում եմ, խնայիր ինձ, յիշիր այն աղ ու հացը, որ կերել ես մեր տանը: Մի թողնիր զապտեաներիդ իմ տունը մտնել, քարուքանդ անել, իմ օջախը պղծել... Որդիս տանը չէ, նա գիւղից դուրս է գնացել...

Հուսէյն քէկ. Ա՛, լեզուդ բացուեցաւ արդէն, շատ ուրախ եմ, ռես: Բայց դու մի վրդովուիր, իմ զապտեաները շատ քաղաքավարի են, բայց աւելի հոտառու շներ: Նրանք քո օջախի մութ անկիւններից ընտիր գոհարներ կը հանեն և ինձ կը ներկայացնեն:

Սրգօ. Բէկ, վերստին խնդրում եմ, ահա ոտքերդ ընկած աղաչում, յետ կանչիր զապտեաներիդ, տունս մի պղծիր: Իմ որդին տանը չէ, նա ինքը կը գայ քեզ մօտ միայն թէ հեռացրու զապտեաներին:

Հուսէյն քէկ. (Քմծիծաղ): Ռես, դու անհոգ կաց, իմ զապտեաները քեզ ոչ մի վնաս չեն կարող հասցնել. նրանք այնքան քաղաքավարի և ազնիւ են, որ առանց իմ գիտութեան ոչ մի բանի ձեռք չեն տալ: Ու եթէ ես տեսնեմ, որ արդարև որդիդ այս վայրկենիս այստեղ չէ թագնուած, ես հանգիստ կը թողնեմ քեզ ու քո պառաւին իսկ նրա փոխարէն միայն մի պատանդ



կը վերցնեմ: (Դրսից լացի, աղաղակի ձայներ): Այ, լսում ես, ուես: Այդ իմ հոտառու շներն են, որ որսը ձեռք են գցել:

Սրգո. (Առաջ գալով և ատրճանակը հանելով): Բէկ, թող անիծուած լինիս:

Հուսէյն քէկ. Կապեցէք այդ շանը, որ համարձակուում է զէնք բարձրացնել: (Կապում են և զէնքը խլում):

### Տ Ե Ս Ի Լ Զ.

Խաթուն. (Դրսից): Վայ ինձ, վայ իմ օրին ու արևին: (Ներս գալով և Հուսէյն քէկի ոտքերն ընկնելով): Բէկ, տուն ու տեղս մի քանդիր, վերև Աստուած, ներքև դու:

### Տ Ե Ս Ի Լ Է.

Զապտեաները ներս են բերում ուշաթափ եղսօյին:

Քուրդ. Բէկ, մենք ամեն անկիւն քրքրեցինք, տունը տակն ու վրայ արինք, սակայն Կարօյին չգտանք: Նրա փոխարէն այս հիւրիին բերինք, որը կատաղաբար մեր երեսն էր չանկոտում:

Հուսէյն քէկ. Շատ լաւ էք արել, մինչև Կարօյին բռնելը սրան մեզ մօտ կը պահենք:

Սրգո. Բէկ, զգուշացիր, այդ անիրաւութեան դէմ ես կը բողոքեմ վեհափառ Սուլթանի գահի առաջ և դու չարաչար պատժի տակ կ'ընկնես:

Հուսէյն քէկ. Հա... հա... հա... յիմար, անշնորհք գեաւուր. միթէ այսքան ժամանակ Սուլթանի շունը լինելով չ'հասկացար, որ այստեսակ հուրի փերիները մեզ են պատկանում ու մենք պիտի վայելենք: Մեր շարիաթի և Սուլթանի իսկ սրբազան հրամանն ենք կատարում, երբ ձեր գեղանի աղջիկները խլում ենք ձեր պիղծ ձեռքերից: Գնա, բողոքիր, կատաղիր, կատաղութեան փրփուրը թող բերանդ ուղղէ, վրէժինդը թեան բոցը աչքերդ թող այրեն, բայց իմացիր, որ այդ բոլորը կանցնեն ինձ համար ինչպէս օճառի պղպղակներ և ես քո աղջկայ գրկում հանգստանալիս անուշ սոսափիւն միայն կը զգամ:

Խաթուն. Բէկ, թող երկինքը փուլ գայ գըլխիդ, թող դժոխքի բաժին լինի հոգիդ, անգրւթ, անիրաւ...

Սրգո. Օ... Բէկ, դու հասար ինձ, միամիտ, հանգիստ ժամանակ, բայց զգուշացիր երբ կատաղած գազանին առաջդ տեսնես: Սասունցու երակների մէջ չէ վազում ստրկական արիւն, և նա գիտէ պաշտպանել իւր պատիւը: Խորհուրդ եմ տալիս քեզ քէկ, թող այդ գարշ վարմունքդ, հեռացիր տանիցս ապա թէ ոչ երդուում եմ նախահայրերի սուրբ յիշատակով, որ քո դիակը այստեղից դուրս կը շարտեմ: (Թափահարում է, թոկերը քանդում և գոտի տակից հանում է սուրը):

Հուսէյն քէկ. (Նկատելով այդ և սուրը մերկացնելով): Ի՞նչ, դու դեռ յանդգնում ես... Ահա քեզ: (Զարկում է):



Սրգօ. (Ընկնելով): Օ... դու ինձ յաղթեցիր, բէկ, ու ես մեռնում եմ...

Հուսէյն բէկ. (Զապտեաներին): Դէհ, քաշուեցէք, գնանք, այս գոհարին լաւ նայեցէք, ոչ մի տեղը ցաւ չ'տաք հանգիստ տարէք: Նա դեռ թէև ուշաթափ է, բայց որ զարթնի սոսկալի կը լինի: Գեաւորները աղջիկները սկզբից շատ յամառ և կատաղի են լինում բայց յետոյ շուտով մեղմանում են և դառնում ինչպէս անմեղ զառը: (Դուրս են գնում):

Խաթուն. Աղջիկս... Եղսօ... Վայ ինձ, փուչ երագս կատարուեց... Աստուած, հասի՛ր, օգնի՛ր... (Ուզում է դուրս գնալ):

Սրգօ. (Վերաւոր, գետին տապալուած): Սպասի՛ր... Խաթուն, գոռալով մենք մեր ցաւին դարձան չենք անի, արցունք թափելով սպեղանի չի դնուի մեր խորունկ վէրքին: Ա՛խ, Հուսէյն բէկի հասցրած վէրքը շատ խորունկ է ու մեծ: Այդ վէրքին Աստուած չի կարող դարձան անել: Նա շատ հեռու է ու անկարեկից:

Խաթուն. Եթէ Աստուած գութ ու խիղճ չունի, թող իմ հոգիս էլ առնէ, ինձ էլ սպանէ, որ այսպիսի սև օր չ'տեսնեմ... Բայց դու վերաւորուած ես, քեզ օգնութիւն է պէտք:

Սրգօ. Իմ մասին մի մտածիր: Վէրքս խոր է և մահացու, բայց Հուսէյն բէկի հասցրած անպատուութիւնը աւելի խոր և ահուկի: Ա՛խ, ժողովրդին կանչիր, որդուս ձայն տուր, գոռա, որ սարերից դէնը լսի նա և իւր քրոջ վրէժը լուծի:

Խաթուն. Վայ ինձ, (դուրս նայելով) էյ, հարևաններ, ժողովուրդ, հասէք, օգնեցէք, ձեր ռեսին սպանեցին, նա մեռնում է:

## Տ Ե Ս Ի Լ Ը.

Այլ ու ձախ կոկմից ներս են մտնում գիւղացիք և շըր-ջապատում Սրգօյին:

Ժողովուրդ. Այդ ի՞նչ դժբաղտութիւն էր... Ի՞նչ պատահեց... Անիծուի Հուսէյն բէկը...

Սրգօ. (Կիսատ վեր կենալով և բռնելով վէրքը): Ինձ ականջ արէք, ձեր ռեսի խօսքերը լաւ ուշադրութեամբ դատեցէք: Շնորհակալ եմ, դժբախտութիւնը պատահելուց յետոյ եկել, ինձ ցաւակցութիւն էք յայտնում, ձեր կարեկից խօսքերով ինձ աւելի յուզում: Դուք արդէն գիտէք, Հուսէյն բէկը տունս կոխեց, օր ցերեկով իմ աղջկան դուրս քաշեց ու իմ ծերացած սըրտում մի այնպիսի խոր վէրք բացեց, որին դարձան դնել այլևս անհնար է: Իմ սրտի մէջ կային շատ անբուժելի վէրքեր, բայց դրանց մասին ես ձեզ ոչինչ չէի ասում, լուռ էի, ձայն ծպուտ չէի հանում, թէև նրանք քրքրում էին սիրտս և անասելի տանջանք հասցնում ինձ: Այդ վէրքերը Հուսէյն բէկը և քրդերն էին տալիս ինձ, բայց ես գերմարդկային ճիգ էի գործադրում և այդ գազաններին մի կերպ ճանապարհ դնում: Ամեն անգամ երբ նրանք մեր գիւղն էին թափւում,



այս ու այն պահանջն անում գիւղից ես, իբրև գիւղի ռես, այդ մասին առանց ձեզ մի բան ասելու, իմ սեպհական միջոցներից քաղցրացնում էի նրանց անյագ բերանները և ճանապարհ գցում... Իբրև գիւղի ռես, գիւղի ամբողջ դարդն ու ցաւը, վիշտն ու հոգսը իմ ուսերիս վրայ էի տանում, որպէս զի դուք, իմ ժողովուրդ, հանգիստ ու անխռով ապրէք: Բայց երևում է, որ մեղքերս շատ են եղել, որ Աստուած իմ գլխին այս, փորձութիւնը բերեց ու իմ Եղսոյին իմ ձեռքից խլեց... Այժմ ես մեռնում եմ ու իմ վերջին խնդիրքը ասում. ազատեցէք Եղսոյին, փրկեցէք նրան, որ ես հանգիստ սրտով գեղեզման իջնեմ:

Ժողովուրդ. Ռես, բայց մենք ի՞նչ կարող ենք անել... Հուսէյն բէկը ուժեղ է և զօրաւոր:

### Տ Ե Ս Ի Լ Թ.

Ներսէ մտնում Կարօն գէնքի մէջ կորած և խոժոռուած դէմքը դարձնում ժողովրդի վրայ, որը տեղ է տալիս նրան:

Կարօ. Ի՞նչ կարող էք անել... Ամօթ այդպէս ասողին, ամօթ յուսահատողին: Սասունցին այդպէս չի կարող ասել: Նա ազատ ապրել է և ազատ էլ պիտի մեռնի: Ասացէք, Սասունցիք, ի՞նչ է անում մըջիւնը, երբ փրփրուն ալիքների վրայ խեղդուելուն է մօտ, ի՞նչ է անում որդեկորոյս կենդանին կամ վիրաւոր առիւծը

երբ թշնամուն իւր առաջն է տեսնում... Հուսէյն բէկը այսօր մեզ զարկեց, մեր աղջկան քաշեց, վաղն էլ ձեր աղջկան կը քաշի, բայց մինչև երբ. թող լռէ նա, որի համար քաղցր է անարգ ստրկութիւնը, բայց մենք Սասունցիք, մեր պատիւը, մեր օջախի սրբութիւնը կը պահենք և կուրծքներս դէմ տուած թշնամուն, պատուով կը մեռնենք:

Սրգօ. Ապրես, Կարօ, ապրես... Բայց մենք արիւն թափել չենք ուզում:

Կարօ. Հայր, դու բարի քրիստոնեայ ես, գիտեմ արիւն թափել չես ուզում: Ես էլ չէի ուզում, խաղաղ կուլտուրայով էի ուզում պարապել և նոր հասկացայ թէ որտեղ ենք ապրում և մեզ ինչ է պէտք: Մենք արդէն շրջապատուած ենք արիւն ծարաւ քրդերով, որոնք մեր արեանն են կարօտ: Հուսէյն բէկը գլուխ է անցած այդ խաժամուժ ամբոխին և մեզ վրայ է գալու. բայց երդւում եմ, հայր, որ նա իւր արժանաւոր պատիժը կը ստանայ և Եղսօն նրա ձեռքի մէջ չի մնայ: Սասունցիք, լսեցէ՛ք, քուրդն ու թուրքը ուխտել են հայի անունը ջնջել երկրի երեսից և ոչ մի բանի առաջ նրանք էլ կանգ չեն առնում: Մուշի, Վանի, Տրապիզոնի և այլ քաղաքների մէջ արդէն ծխում են Հայերի ինչքն ու գոյքը և արիւնը գետի նման է վազում: Այդ քրդերը կենդրոնանում են նաև Սասունում, որ հողի հետ հաւասարացնեն և հայի անունը կտրեն



Սասունից: Զգուշացէ՛ք, արթուն կացէք և իսկոյն ինքնապաշտպանութեան դիմեցէք, ապա թէ ոչ ուշ կ'լինի:

Ժողովուրդ. Ապրի կարօն, շատ ու շատ ապրի:

Կարօ. Մի վախենաք, Սասունի լեռները դեռ շատ կը դիմադրեն թշնամուն: Հազարաւոր քրդերի դիակներ կը փռուեն մինչև որ նրանք կը տիրեն Սասունին: Մենք կը կռուենք միասին, կը մեռնենք միասին: Մէկը ամենքի համար և ամենքը մէկի համար: Եհա թէ ի՞նչ է խնդրում ձեզանից ձեր զիւղի վարժապետը, ձեր ուսի որդին:

Ժողովուրդ. Կեցցէ կարօն, ապրի մեր ուսը:

Սրգօ. Որդիս, թող Աստուած օրհնէ քեզ: Է՛յ... Սասնոյ ազատ արծիւներ—գողացէ՛ք, ձայն տուէք, որ լեռները թնդան և մեռելները շարժուեն: Պատրաստեցէ՛ք ձեր զէնքերը... Անխնայ յոշոտեցէ՛ք թշնամուն, որ ես հանգիստ լինեմ գերեզմանում և իմ սիրասուն Սասունը ազատ լինի... (Ընկնում է):

Կարօ. Հայր, դու մեռար, բայց երդուում եմ սրովս վրէժդ լուծելու:

Վ. Ա. Բ. Ա. Գ. Ո. Յ. Ը:

## ԵՐՐՈՐԴ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ

Լեռներ. Սասունցիների գիրքեր. մի կողմից նեղ կածանը տանում է դէպի գիւղ:

Տ Ե Ս Ի Լ Ա.

Ներս են մտնում կարօն և Քրիստինէն:

Կարօ. Նայի՛ր, սիրելի Քրիստինէ, ի՞նչ է ներկայացնում մեր արդի կեանքը—վշտերի մի ովկեան, դառն տանջանքերի մի անվերջ շարան, ուր մարդկութիւնը փոխանակ կուտուրապէս զարգանալու, յառաջադիմելու, ծով արցունքներ է թափում:

Քրիստինէ. Բայց ամեն տեղ այդպէս չէ, Կարօ, մարդկութեան մի որոշ մասն է միայն, որ դեռ ենթակայ է այս գաղանութիւններին: Մեր զժբաղդ երկիրն է միայն, որ դարերից ի վեր հեծեծում է ծանր, ահաւոր հեղուկ և նրա վերջը չի երևում:

Կարօ. Այո, մեր զժբախտ երկիրն է, մեր տարաբաղտ հայրենիքը, որ ամեն մի քար, ամեն մի անկիւն արիւնով է ներկուած և ծանր



տնքում է ու հեծեծում: Բայց միթէ մեր երկիրն է մեղաւոր, միթէ մեր հողն ու ջուրը այնքան թունաւոր և ապականուած են, որ մարդիկ գազաններ են ծնւում: Չէ՞ որ այստեղ էլ սիրուն արշալոյսն է ծագում, արտուտը հնչեցնում իւր ուրախ տաղերը, սոխակը վարդենու թուփի վրայ իւր դալալիկը կանչում, առունները իրենց ուրախ կարկաչիւնը հնչեցնում ու մեր հայրենիքը դրախտի փոխարկում:

Քրիստինէ. Երկիրը, հայրենիքը մեղ չունի, այլ շրջապատող տարրն է յանցաւորը: Այդ շրջապատը մինչև չմաքրուի, չգտուի հայի կեանքը չի բարւոքի:

Կարօ. Բայց չէ՞ որ մենք խաղաղ, կուլտուրական միջոցներով աշխատում էինք մաքրել, գտել շրջապատը: Չէ՞ որ դու էլ, ես էլ կոչուած ենք ազգերի մէջ համերաշխութիւն ձգելու, սէր, ազնւութիւն քարոզելու, բայց միթէ մեզ թողնում են այդ ճանապարհով ընթանալու: Օ՛, ոչ, խաւար տարրին լուսատու ճրագները փոսակար են և ահա նրանք էլ ինձ ու քեզ նմաններին փրկալիներ անուանելով ամեն ձիգ են թափում հալածելու մեզ և ջնջելու երկրի երեսից: Ճիշտ էր ասում հայրս թէ մեր ձեռնարկութիւնը չի յաջողուի, թէ կըմեռնի մեր գաղափարը: Եւ ահա մենք կը գոհուենք, մեզանից յետոյ մեզ նման շատերը նոյն ճանապարհով կերթան մինչև որ, մինչև որ... Բայց ո՞վ գիտէ, ես բոլորովին հիասթափուել եմ իմ կեանքից:

Քրիստինէ. Հիասթափուել պէտք չէ, Կարօ, օրինակ առնենք հէնց լուսաւոր եւրոպայից: Այնտեղ էլ դարերից առաջ նոյն խաւարն էր տիրում ինչպէս և մեզ մօտ, այնտեղ էլ նոյն արեան գետերն էին հոսում ինչպէս և այստեղ է հոսում: Նոյն կեանքի, գոյքի, պատուի անապահովութիւնը ինչ որ այստեղ, բայց տես հիմա, այնտեղ քաղաքակրթութեան լուսաւոր ճաճանչներն են տարածւում: Ժամանակը կը գտի, կ'մաքրի...

Կարօ. (Ընդհատելով): Ժամանակը... Դու ասում ես ժամանակը կը գտի, կը մաքրի, բայց չէ՞ որ դարեր են անցել և գուցէ դեռ դարեր էլ անցնեն և նոյն վիճակը շարունակուի: Ժամանակը ինչ կարող է անել առանց աշխատանքի: Ժամանակը չէ, որ քաղաքակրթում է մարդկութիւնը, այլ մարդն ինքն է իրեն քաղաքակրթում, լուսաւորում, զարգացնում և դրա հետ միասին ազնուացնում իւր բարքերը: Մարդկութեան մասսան կը փնայ նոյն խաւարի մէջ ինչ խաւարի մէջ ապրել է նա եթէ նրանց միջից դուրս չ'գան մի մի անձնուէրներ, որոնք մոռացած իրենց գոյութիւնը մասսայի համար են աշխատում և որպէս մի մի խթաններ մասսային առաջ են մղում: Մեր երկրի մասսան էլ՝ հայն, քուրդը, թուրքը, ասորին և այլն դարեր շարունակ խաւարի մէջ է խարխափել և գազանական հոգին բուն դրած նրա մէջ, միայն արիւնով, յափշտակութիւնով է ապրել: Նրա մէջ բացակայել է մարդ-



կութեան վեհ հոգին, ազնիւ ձգտումներ, ընդհանուր հասարակական ձեռնարկութիւն, այլ այդտեղ տիրապետելիս է եղել միայն «ուժի» սկզբունքը, բռնութեան ընթերցումը: Թոյլը, անգործ միշտ տանջուել, միշտ կեղեքուել և կուլ է գնացել ուժեղի անյագ որովայնում: Եւ այդ ընթերցումը դեռ դարեր կը շարունակուի եթէ մենք չ'կռուենք այդ չարիքի դէմ:

Քրիստինէ. Այո, կռուենք... Բայց ի՞նչ կարող է անել մէկը հազարաւորների դէմ: Մենք կը կործանուենք այնպէս, ինչպէս մեզ նման հազարաւորներն են կործանուել:

Կարօ. Այդ փոյթ չէ ամենակին: Մենք կը մեռնենք, մեր տեղ նորերը կը կանգնեն, նրանք էլ կ'ընկնեն, նրանց էլ կը փոխարինեն ուրիշները: Մենք նման ենք անձրևի կաթիլին, որը դիպչում է լեռ քարին՝ ու յետ խփւում, բայց ամեն անգամ դիպչելով նրան մի հետք, մի թոյլ, անտեսանելի նշան է թողնում նրա կրծքում և այդպէս աննշան հարուածներ տալիս նրան, մինչև որ ծակում է նրա սիրտը և շամփրում նրան: Մենք էլ այդ կաթիլներն ենք, կը գանք ու կերթանք մինչև որ հսկայ հրէշը շունչը կը փչի և մասսան ազատ շունչ կ'ընչի:

Քրիստինէ. Բայց մենք ոչինչ չենք կարող անել: Քրդի, թուրքի դէմ այդ ճանապարհով չենք կարող կռուել: Ուժը նրանց կողմն է և մենք նրանց բազմութեան առաջ միայն մի հիւլէ ենք կազմում:

Կարօ. Ես չեմ ասում զինուենք, կռիւ, պատերազմ մղենք: Ոչ, ես շատ հեռու եմ այդ տեսակ քաղաքականութիւնից: Ես խաղաղ, հանգիստ, կուլտուրական կռիւ եմ ասում: Այսինքն կրկին իմ փայփայած գաղափարս: Այս բոլորին որ զինուել ենք մենք, այդ լոկ միայն ինքնապաշտպանութեան համար է. և այդ կռուի մէջ նրանք մեզ իրենք են մզում: Մեզ զէնք, արիւն պէտք չէ: Մենք հեռու ենք այդ մտքից, սակայն երբ քուրդը ասում է մեզ վիզներդ ծոցէք մենք մեր սրերի թափը փորձենք, կամ թէ տուէք մեզ ձեր աղջիկները, սիրուն հարսները, ձեր ինչքն ու գոյքը և լոցէք, այդ մենք չենք կարող տանել: Անբան անասունն էլ իւր պատիւը, իւր կեանքը պահպանել գիտէ ուր մնաց մենք, որ մարդ անունն ենք կրում: Նրանք երդւում են մեր գոյութիւնը իսպառ վերացնել և մենք չենք կարող լուռ մեր վիզները թեքել: Սասունցին իւր կուրծքը դէմ կը տայ թշնամու գնդակներին և իւր դիակները վրայ միայն թոյլ կը տայ Սասունը առնելու:

Քրիստինէ. Այո, մոխրակոյտ կը դառնայ Սասունը, ես այդ զգում եմ և իմ հերոս Կարօյի դիակը կը յոշոտեն նրանք:

Կարօ. Իմ սիրելի Քրիստինէ, տուր ձեռքդ սեղմեմ: Ես քեզ գլխացաւանք շատ պատճառեցի: Բայց տես, հեռուից, արդէն լսում է քրդերի ոռնոցի ձայնը: Օ... այնտեղից արեան



և աւերի հոտ է փչում: Գնա՛, գիւղ մտիր, սիրտ ու հոգի ներշնչիր Սասունցուհու մէջ, իսկ ինձ թող դիրքերը բարձրանալ:

Քրիստինէ. Բայց ինձ միայնակ մի թողնիր: Ա՛խ, չէ՞ որ երգուեցինք միասին ապրել ու միասին մեռնել: Ա՛խ, եթէ խաւարի քո արևը, ես այլևս չեմ ապրիլ:

Կարօ. Քրիստինէ, դու քո խօսքերով այրում, փոթոթում ես սիրտս: Օ՛, դու վառեցիր կրկին սրտիս հնոցը, բորբոքեցիր նրա հուրը դժոխքի կրակից էլ զարհուրելի: Այո, ես խօսք եմ տուել, ես երգուել եմ սիրել քեզ, ապրել քեզ հետ, մեռնել քեզ համար. բայց ասա՛, ի՞նչ է պատահել. դու որ հոգի ու շունչ էիր փչում, ինձ յուսադրում, քաջալերում, դէպի կրակը ուղարկում իմ քոյրերի և եղբայրների պաշտպանութեան համար, այժմ ի՞նչու խօսքերդ այդպէս վհատ և յուսահատ են:

Քրիստինէ. Օ՛... Կարօ, ես ինքս ինձ չեմ հասկանում: Այս վայրկենիս սիրտս այնքան մռայլ, այնքան վհատ է, որ ինձ հաշիւ չեմ կարողանում տալ: Ա՛խ, սիրտս մի այնպիսի թախիծով է պատած, որ կարծես մեռած լինի: Զգում եմ, կարծես թէ ուր որ է գազան քրդերը գրոհ կը տան ու Սասունը մոխրի կոյտերով կը պատեն... Բայց, բայց ես ի՞նչ եմ ասում... Օ՛, ո՛չ, քաջացիր, իմ սիրելի Կարօ, թող շիկացած գնդակները մղուեն սիրտդ և այնտեղից

դուրս պոկեն քո քաջ սրտիդ կտորները, միայն թէ ազատուի Սասունը: Ես կը հետևեմ քեզ: Սասունի կանանցից և աղջիկներից գնդեր կը կազմեմ և կը մղուեմ թշնամիների խիտ շարքերը:

Կարօ. Իմ սիրելի, իմ աննման Քրիստինէ: Դու դիւցազնի նման ես խօսում և եթէ ես մեռնեմ էլ, վիշտը չի պատի դէմքիս այլ ուրախ, կենսունակ ժպիտը կը լինի իմ վերջին հայեացքը, Բայց լսում ես... Կրկին ոռնում են քրդերը, դու այժմ գնա գիւղ, իսկ ինձ թող կուրծքս դէմ գնել շիկացած գնդակներին: Գնա՛, և թող նախախնամութիւնը պահէ Սասունին:

Քրիստինէ. Թող Տէրը պահէ քեզ: (Գրկուում են. Քրիստինէն գլխիկոր դուրս է գնում):

## Տ Ե Ս Ի Լ Բ.

Կարօ (միայնակ):

Կարօ. Գնաց... ո՛վ գիտէ կը տեսնուենք կրկին թէ ոչ: Զորս հազար քուրդ շրջապատել են մեր գիւղին և գազանային ոռնոցներ արձակելով մօտենում են նրան քարուքանդ անելու: Ա՛խ, աննման աղջիկ, քո սիրուն աչքերը, վառվռուն հայեացքը ինձ ուղեկից կը լինեն ամենավտանգաւոր դիրքերումս իսկ և թշնամու գոռ խմբերն իսկ տեղի կը տան իմ կատաղի հարուածներին... (Հրացանների ձայներ): Բայց գնամ... Ահա սկըսւում է դժոխքը: (Դուրս է գնում):



Տ Ե Ս Ի Լ Գ.

Բէմը մի փոքր փնում է դատարկ. հերս է մտնում Լէյ-  
լին մի փունջ ծաղիկ ձեռքին և այս ու այն կողմն  
ընկնելով կրկին ծաղիկներ պոկում:

Լէյլի. (Առաջ գալով և մի ծաղիկից տերևներ պո-  
կելով): Սիրում է, չէ սիրում: Ա՛խ, նա ինձ  
չէ սիրում: Սևով է պատում սիրտս և դեռա-  
փթիթ կեանքս խաւարեցնում: Ա՛խ, նրա սրտի  
մէջ նստած է ուրիշը, սեւաչեւայ, շիկահեր Քրիս-  
տինէն, ես այդ գիտեմ, ես այդ գուշակում եմ:  
(Նորից պոկելով): Սիրում է, չէ սիրում, սիրում  
է... Օ՛, ոչ, ես սխալուած եմ, նա ինձ սիրում  
է, տերևները այդ են գուշակում և իմ թրթռուն  
հոգուն ուրախութիւն պատճառում: Օ՛... եթէ  
ես հնար ունենայի նրա հոգուց դուրս պոկել  
Քրիստինէի պատկերը, այն ժամանակ Լէյլին  
ամենաերջանիկ աղջիկը կը լինէր: Բայց պէտք  
է գնալ, տեսնուել Կարօյի հետ ու նրան լուր  
տանել իւր քրոջ՝ Եղսօյի մասին: (Գնում է բեմի  
խորքը):

Տ Ե Ս Ի Լ Գ.

Ներս են մտնում Հուսէյն բէկ և քրդեր:

Հուսէյն բէկ. Գլխաւորապէս պէտք է Կա-  
րօյին բռնել: Նա է, որ զրգրում է Սասունցի-

ներին և ապստամբեցնում մեր դէմ: Եթէ նա  
չ'լինէր, մենք հեշտութեամբ Սասուն կը մըտ-  
նէինք և քարուքանդ կանէինք:

Քուրդ. Բէկ, նրա հետ գործում է և նրա  
նշանածը, Քրիստինէն: Հարկաւոր է և նրան  
բռնել: Նրան ձեռք ձգելուց յետոյ Կարօյի  
թևերը կը կոտրատուեն: Նա էլ չի ապրի ա-  
ռանց նրա:

Հուսէյն բէկ. Այո, ես հասկանում եմ: Բայց  
անիծուածները աւելի կատաղի են լինում  
քան տղամարդիկ: Իհարկէ, աւելի հեշտ  
է Քրիստինէին ձեռք ձգել քան Կարօյին. և  
է մենք կը բռնենք նրան ու երբ նա խարոյկի  
վրայ բոցավառուելիս կը լինի, այն ժամանակ  
Կարօն անձնատուր կը լինի մեզ և մենք նրա  
դատաստանն էլ կանենք:

Քուրդ. Ինձ վրայ վստահ եղիր, բէկ: Ես  
մի այնպիսի հնարքով Քրիստինէին ձեռք ձգեմ,  
որ Կարօյի մտքովն անգամ չանցնի:

Հուսէյն բէկ. Ապրեա, դու քաջ ես: Ես ճա-  
նաչում եմ քեզ: Եւ եթէ Քրիստինէին իմ ձեռքը  
մատնես, ինձնից մեծ վարձատրութիւն կը ստա-  
նաս: (Լէյլին առաջ է գալիս):

Քուրդ. Բայց, բէկ, տեսնում ես: Ահա Լէյ-  
լին մեր կողմն է գալիս: Ի՞նչ է շինում նա այս  
վտանգաւոր տեղերում:

Հուսէյն բէկ. Լէյլի, աղջիկս, ի՞նչ ես շի-  
նում այս կողմերը:



Լէյլի. Բէկ, իմ մասին անհոգ կացիր, ես լրտեսում եմ Սասունցիների դիրքերը: Ձե՞ որ քրդի աղջկայ երակների մէջ էլ իւր ցեղի հերոս արիւնն է հոսում: Ես կատուի դիւրաշարժութեամբ բարձրացայ Սասունի ապառաժոտ լեռները և ամեն բան տեսայ: Սասունցիք ամուր դիրքեր ունեն բռնած և հանգիստ մեզ են սպասում, որպէս զի շիկացած գնդակներով հիւրասիրեն մեզ: Իսկ կանայք... օ, նրանք դեերի նման զէնք ու պաշար են հասցնում իրենց տղամարդկանց ու քաջալերում կոտորելու մեզ: Գիտե՞ս, հայր, Կարօն մի նշանած ունի, Քրիստինէ անունով: Նա է որ անվախ դիրքերի մէջ է մտնում ու հոգի ու շունչ փչում տղամարդկանց: Այդ աղջկան պէտք է մէջ տեղից վերացնել, կտոր կտոր անել, յոշոտել նրա մարմինը, որ Սասունցիք խելքի դան:

Հուսէյն ըէկ. Մենք կը բռնենք նրան, միամիտ մնայ, Լէյլի, և Կարօյի ու Սասունցիների աչքի առաջ խարոյկի վրայ կայրենք նրան, որ նրանք խելքի դան: Բայց դու գնայ այստեղից, Լէյլի: Հայերի գնդակը չի խնայի մատաղ կեանքդ և դու զուր զոհ կը դառնաս:

Լէյլի. Օ... հայր, ես սիրում եմ այս ժայռերի վրայ մագլցել որպէս լեռների այծեամ և վտանգը ինձ համար ոչինչ է: Հանգիստ մնայ, գեաւուրի գնդակը ինձ չի կաշի: Ես կախարդուած եմ: Եւ հէնց հիմա գնում եմ Կարօյի դիրքը դիտելու:

Հուսէյն ըէկ. Գնա, բայց զգոյշ: Իսկ դուք տղէք, դարան մտէք Մարաթուկի ձորում և աշխատեցէք ձեռք ձգել Քրիստինէին: (Դուրս են գնում):

Լէյլի. (Միայնակ): Օ... Իմ սիրտը մռայլւում է: Դառն ու սև մտքերը կեղեքում են սիրտս ու ինձ գցում յուսահատութեան ծովը: Ա՛խ, Սասունի բարձրաբերձ լեռներ, ձեր մշուշով պատած կրճերին հայ քաջերն են ապաստանուած, որոնք կ'ընկնեն քրդերի սրերի տակ և ապառաժների լեռ կուրծք չի կարող պաշտպանել դրանց թնդանօթների ոռմբերից: Քարուքանդ կը լինի Սասունը ու նրա հետ գուցէ իմ սիրտը, իմ հոգին... Ա՛խ, Կարօ, եթէ դու գիտենաս թէ ինչքան սիրում եմ, ինչքան պաշտում եմ քեզ, դու այդքան անգուլթ չէիր լինի... (Առաջ գալով): Բայց ասա և նրա դիրքը: Ժայռերի ծերպին, անդունդի գլխին, ինչպէս գիշատող արծիւ թառ է եղել ու իւր սրատես աչքերով ինձ է նայում: Բայց ես քեզ կը հասնեմ, լեռների արծիւ, ու ոտքերիդ տակ թաւալուելով սէր կը խնդրեմ քեզանից: Օ... եթէ մերժես իմ սէրը, եթէ արհամարես քրդի աղջկայ սէրը, այն ժամանակ զգուշացիր... (Առաջ գալով): Է՛յ Կարօ, Կարօ:

## Տ Ե Ս Ի Լ Ե.

Ժայռի գլխին երևում է Կարօն հրացանը ձեռքին և նկատելով Լէյլիին հրացանն ուղղում է:



Կարօ. Է՛յ, Բ՛ի է գալիս, կաց, ոչ մի քայլ առաջ, ապա թէ ոչ շիկացած գնդակի զոհ կը լինես:

Լէյլի. Լեռների արծիւ, հայ հերոս Կարօ, ցած դիր հրացանդ և գնդակդ պահիր թշնամու համար:

Կարօ. Ո՞վ ես դու և ի՞նչ ես ուզում: Մեր դիրքերին մօտենալ ոչ ոքի չէ թոյլատրած, ոչ մի քայլ, ապա թէ ոչ իմ քաջերի հրացանները կ'որոտան:

Լէյլի. Բայց միթէ քո քաջերը մի աղջկայ դէմ հրացան կարձակեն կամ միթէ Կարօյի սրատես աչքերը խաւարել են կամ սիրտը կոշտացել, բիրտացել, որ չէ ճանաչում իւր վաղեմի բարեկամին, Լէյլիին:

Կարօ. Լէյլի... Հուսէ՞յն բէկի աղջիկը... Օ... հեռացիր, հեռացիր այստեղից ապա թէ ոչ դժոխքի կրակը կը թափեմ վրադ:

Լէյլի. Այո, թող դժոխքը կործանուի գլխիս, սեպացած ժայռերը ինձ գերեզման դառնան, եթէ ես չար մտքով քեզ մօտ եկած լինեմ: Լսիր, Կարօ, ցած իջիր, Լէյլիի խօսքերին ա-կանջ դիր, նրան քեզ մօտ քոյրդ է ուղարկել, սիրուն Եղսօն:

Կարօ. (Ցած գալով): Եղսօն... Օ... Լէյլի, եթէ դու ինձ խաբում ես և այդ քաղցրախօս լեզուիդ տակը թոյն է պարունակում, այն ժամանակ իմ քաջերը քեզ պատասխան կը տան:

Լէյլի. Օհ ոչ Կարօ, իջիր, (Կարօն մօտենում է). նստիր այս ժայռի վրայ և ինձ թոյլ տուր ոտքերիդ տակ նստել, իմ դարդն ու վիշտը քեզ պատմել: Մի քանի վայրկեան գոնէ քեզ հետ լալ և ուրախանալ, ժպտալ և արտասուել, յուսոյ անողորմ ալիքների վրայ ծփալ, երերուել մինչև որ գուցէ սև մահը գրկէ ինձ:

Կարօ. Լէյլի, քո խօսքերը յուսահատական են: Ինչ որ անաւոր, սոսկալի ու վհատ լուրեր են նախագուշակում: Ասա, ի՞նչ է պատահել Եղսօյի հետ, սև մահն է գրկել նրան թէ դեռա-փթիթ կեանքը խաւարել: Ասա, մի խնայիր ինձ: Ասա, ի՞նչ վիշտ կրծում է սիրտդ:

Լէյլի. Իմ սիրելի Կարօ, մի տրտմիր, մի վհատիր: Ես գիտեմ քաջի սիրտը ընդունակ չէ վհատելու: Քոյրդ՝ Եղսօն ողջ ու առողջ է և նրա մի մազին դիպչող չկայ և ոչ ոք էլ չի համար-ձակուի դիպչել, քանի որ իմ խնամքի տակն է: Ես կը պահեմ նրան ինչպէս սրտիս սրբազան մի անդին գոհար, մինչև որ անցնի արհաւիրքը, մինչև որ դադարի շիկացած գնդակների սուլոցը, մինչև որ դադարի շիկացած գնդակների սուլոցը, մինչև որ դադարի շիկացած գնդակների սուլոցը, մինչև որ դադարի շիկացած գնդակների սուլոցը... Օ... Կարօ, դու աւերի զոհերի ողբն ու լացը... Օ... Կարօ, դու չգիտես թէ այն օրից, երբ հեռացանք ձեր տանից, ձեր օջախից ինչ վիշտ, ինչ տանջանք կրծում է սիրտս ու ինձ գցում անվերջ, անսահման յուսահատութեան մէջ:

Կարօ. Լէյլի, Լեռների աղջիկ, դու դառնա-ցած սրտիս մէջ նոր վիշտ, նոր տանջանք ես



աւելացնում: Այս արհաւիրքի և ծով արցունքի ժամանակ, երբ կատաղի վրէժխնդրութիւնն է տիրապետում, երբ որդին հօրը, քոյրը եղբօրը մոռացած, արեան ասպարէզ են իջած, դու քո անսահման յուսահատութեան մասին ես խօսում: Ասա, խօսիր, դու թէև Հուսէյն բէկի աղջիկն ես, իմ ազգի ամենաոխերիմ թշնամու դուստրը, սակայն ես պարտաւոր եմ քո վիշտը թեթեաց-  
նելու եթէ այդ կախուած լինի ինձնից:

Լէյլի. (Համբոյրներով ծածկելով Կարոյի ձեռքերը): Օ... իմ քաջ հերոս: Դու ես իմ արևն ու կեն-  
դանութիւնը: Այո, իմ բաղդը, իմ ուրախութիւնը դու ես և իմ կեանքը քեզնից է կախուած: Ես սիրում եմ քեզ, Կարօ, և քեզ համար միայն ապրում:

Կարօ. Ի՞նչ, ի՞նչ ասացիր... Սիրում ես ինձ... Այո, ամեն մարդ պարտական է սիրել և ոչ ատել: Ուրախ եմ, որ քրդի աղջկայ մէջ այնպիսի գիտակցութիւն է պատել, որ միայն սիրոյ մասին է մտածում: Այո, պէտքէ սիրել ինչպէս քոյր ու եղբայր...

Լէյլի. (Ընդհատելով): Բայց լսիր ինձ, Կարօ: Իմացիր, որ իմ սէրը չէ վաղանցուկ, թեթև, խաբուսիկ... Նա սուրբ է և անարատ: Զինջ, որպէս կապոյտ եթերը, յստակ, որպէս առաւօ-  
տուայ ցօղը, անդրանիկ ու վսէմ, ինչպէս բարձ-  
րաբերձ լեռների կուսական ճակատների առա-  
ջին կենսունակ ճառագայթը: Օ... առաջին

անգամ երբ տեսայ քեզ, երբ սրտիս մէջ շամփ-  
րուեց սիրոյ նետը, այնտեղ նախ մի փոքրիկ սոսափին առաջացաւ, բայց այնքան անոնշ, այնքան քնքոյշ, ինչպէս զեփիւռի մեղմ տատա-  
նումը: Օ... այդ ժամանակ ես իմ կուսական այտերի վրայ քո համբոյրն էի զգում, քո ձայնի անուշ մեղեդիների դայլայլիկը լսում: Բայց այդ օրերն անցան, սոսափիւնը սաստկացաւ, բռնուն, անարկու փոթորկի փոխարկուեց և սրտիս մէջ հրդէհը բոցավառուեց: Հանգցնել այդ կրակը ես իմ ուժից վեր համարեցի ու եկայ ոտքերիդ տակ ընկնելու: Օ... Կարօ, սիրիր ինձ, սիրիր և մենք երջանիկ կապենք:

Կարօ. (Վեր թռչելով): Ի՞նչ ես ասում, Լէյլի, հասկանում ես արդեօք: Մի՞թէ չգիտես դու, որ իմ սէրը, իմ հոգին արդէն ուրիշին է պատկա-  
նում: Իսկ երկու սէր ես չեմ ընդունում:

Լէյլի. Այո, ես գիտեմ, դու սիրում ես Քրիստինէին: Բայց դու պէտք է մոռանաս նրան, պէտք է դուրս պոկես նրան քո սրտի սրբազան խորքից:

Կարօ. Բաւական է. դու անկարելին ես պահանջում: Ես նրան սիրել եմ ամենանուրբ զգացմունքներովս և ոչ մի ոյժ չի կարող ինձ ետ կանգնեցնել դրանից:

Լէյլի. Բայց նրա սէրը խաբուսիկ է, նենդ ու պատիր:

Կարօ. (Զայրացած): Ոչ մի խօսք: Քրիստինէի



անուհի աշխարհ սուրբ է ինձ համար, որ ոչ մի  
լէյլի խօսքեր ինձ վերայ չեն կարող ազդել:  
Գնա՛, Լէյլի, և իմ սրտիս նուրբ լարերին մի  
դիպչիր...

Լէյլի. (Վեր թռչելով): Բայց քոյրդ, Եղսօն...

Կարօ. Ի՞նչ, դու դեռ սպառնում ես:

Լէյլի. Այո, նա կը կորչի, նա կը տանջուի  
ամենասոսկալի տանջանքներով եթէ դու ձեռք  
չես վերցնի Գրիստինէից:

Կարօ. Լռի՛ր, լռի՛ր Լէյլի, թէ չէ երկինքը  
վկայ եմ կանչում՝ գլխիդ կը պայթի բարկու-  
թեանս բոցը:

Լէյլի. Այո, նորից կրկնում եմ, սիրուն  
Եղսօն քրդի աղջկայ վրէժխնդրութեան զոհ կը  
դառնայ ու երբ տեսնեմ նրան բոցավառ խարոյ-  
կի վրայ այրուելիս, այն ժամանակ միայն ես  
կը հանգստանամ, զգալով, որ ես էլ նոյն տե-  
սակ զարհուրելի հարուած կը լինեմ հասցրած  
քեզ, ինչպէս դու այժմ հասցնում ես ինձ:

Կարօ. (Վեր թռչելով): Լէյլի, նորից կրկնում  
եմ, հեռացիր ինձնից... Հեռացիր, որ չտեսնեմ  
քո կատաղութեամբ լի աչքերդ, չլսեմ դիւակա՛ն  
խօսքերդ: Գնա՛, դու քո դիւակա՛ն խորհուրդդ  
կատարիր, անմեղ Եղսօյին խարոյկի մատնիր,  
բայց երբէք մի մտածիր, որ երբեք ես կարող  
եմ քեզ սիրել... Կարօյին դու լու չես ճանա-  
չում: Ոչ մի սպառնալիքի առաջ նա չի կեղծի,  
չի ստի, չի շողոքորթի: Նրա սիրտը արդէն

բռնուած է Քրիստինէով և ուրիշ ոչ մէկը չի  
կարող իմ սրտից նրա մաքուր, յստակ պատկերը  
դուրս պոկել: Գնա՛, ասա Հուսէյն բէկին, որ  
կարօն քանի կենդանի է չի մոռանայ իւր քրոջ  
վրէժը լուծել: (Գնում է):

Լէյլի. (Ետեից նայելով): Բայց, սպասիր,  
Կարօ, մի գնա, մի քանի ըսպէ էլ համբերիր...  
Օ... ես ստում եմ, Եղսօն կապրի, միայն թէ  
սիրիր ինձ, թոյլ տուր ստքերիդ տակ նստել,  
քեզ նայել ու բաւականանալ դրանով:

Կարօ. Զուր յոյսեր... Մեր մէջ ամեն ինչ  
վերջացած է: Այս արհաւիրքի օրերին ես երբեք  
թոյլ չեմ տալ մեր դիրքերը բարձրանալ ու մեզ  
մատնել հօրդ կատաղութեանը:

Լէյլի. (Կատաղած): Լաւ, քո ասածը լինի,  
բայց զգուշացիր այսուհետեւ քրդի աղջկայ  
վրիժառութիւնից: Նա չի կանգնի ոչ մի բանի  
առաջ և զղացողը դու կ'լինես: Օ... փախիր ինձ-  
նից, Կարօ, փախի՛ր, դժոխքի կրակը քո վրայդ կը  
թափեմ: (Դուրս է վազում):

## Տ Ե Ս Ի Լ 2.

Կարօ. (Միայնակ, քիչ կանգ է առնում, ապա ա-  
ռաջ գալիս և Լէյլիի ետեից նայում): Ո՛հ... Նա  
գնաց: Գնաց և սրտիս խորքի մէջ մի լայն  
վէրք թողեց: Օ, ես ճանաչում եմ քրդի աղ-  
ջկայ հոգին, նրա վրէժխնդրութեան հոգու



Թափը: Լէյլին կը կատարէ իւր սպառնալիքը և  
Նդսօն կը մեռնի սոսկալի մահով: (Առաջ վաղելով):  
Լէյլի, Էյ, Լէյլի, դարձի՛ր... դարձի՛ր... քրոջս  
սէրը ինձ յաղթում է և ես չեմ ուզում որ նա  
մեռնի, որ նա խարոյկի վրայ բարձրանայ: Ես  
դուրս կը պոկեմ իմ սրտից Քրիստինէի պատ-  
կերը ու կը դնեմ այնտեղ քեզ՝ քրդի աղջկան,  
միայն թէ Նդսօն չմեռնի սոսկալի մահով...  
Բայց... բայց ես ի՞նչ եմ ասում... Օ, ո՛չ, Լէյլի,  
վաղի՛ր, գնա՛, հեռացի՛ր, գեհեհի կրակը գլխին  
թափի՛ր, յոշոտի՛ր Նդսօյի մարմինը, բայց Կարօյի  
սրտից չեա կարող դուրս հանել Քրիստինէի  
պատկերը... Մահը, մահը միայն ինձ կը բաժա-  
նի նրանից: Վաղի՛ր, Լէյլի, փախի՛ր, ու իմ սրտի  
դառնութեան թոյնը աւելացրու:

Վ Ա Ր Ա Գ Ո Յ Ր:



## ԶՈՐՐՈՐԴ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ

Հովիտ: Զորս կողմը լեռներ: Քրդերի բանակ:

Տ Ե Ս Ի Լ Ա.

Ներս են մասնում Հուսէյն բէկ և շէյխ:

Հուսէյն բէկ. Այդ անիծուած գեաւուրները  
մեծ դիմադրութիւն են ցոյց տալիս: Ես չէի  
սպասում:

Շէյխ. Հոգ չէ, բէկ, դրանք ամենքը կը  
կործանուեն, մեծ թէ փոքր, կին թէ մարդ և  
Սասունը հողի հետ կը հաւասարուի:

Հուսէյն բէկ. Բայց մինչև այդ, մեղանից որ-  
քան զոհեր կը տանք: Անիծուած Սասունցիք  
այնպիսի դիւքեր են բռնել, որ նրանց մօտե-  
նալը անհնարին կը լինի մեզ համար:

Շէյխ. (Մորուքը շփելով): Ալլահը կ'ոչնչացնէ  
այդ դիւքերը բէկ և մենք կը տիրապետենք  
Սասունին: Զէ՛ որ վեհափառ Սուլթանի հրա-  
մանն է կոտորել գեաւուրներին և նրանց ինչքն  
ու գոյքը զրաւել: Եւ մենք կը կոտորենք նրանց,  
կ'ոչնչացնենք ու աշխարհի երեսից կը ջնջենք այդ  
ցեղը: Մեծ է Ալլահի զօրութիւնը և բացի դրա-  
նից չկայ ուրիշ Աստուած:



Հուսէյն ըէկ. (Գլուխ տալով): Այո, մեծ է Ալ-լահի զօրութիւնը և բացի Նրանից չկայ ուրիշ Աստուած: Նա կը խորտակէ գեաւուրները զօրութիւնը և նրանց սիրուն աղջիկները և հարսները մեր ձեռքը կը մատնէ: Սուլթանի ասեղ զօրութեան առաջ աշխարհը կը քանդուի, ուր մնաց մի բոլուն գեաւուրները: Նրա օգնական զօրքերը շուտով Սասուն կը մտնեն և թնդանութները ոռմբերի առաջ Սասունի ամրութիւնները կ'ոչնչանան:

Շէյխ. Այո, օր աւուր մենք սպասում ենք թնդանութների գալուն և այն ժամանակ կը վճռուի Սասունի բաղդը. բայց մինչև այդ ես կը ժողովեմ մեր ուղղափառ մուսուլմաններին և նրանց մէջ հոգի և սիրտ ներշնչելով, կը յարձակուենք Սասունի վրայ, նրան հիմնադատակ անելու:

Հուսէյն ըէկ. Թող Ալլահը օրհնէ կեանքդ, ես հրաման կը տամ ժողովուելու նրանց այստեղ մարգարէի սուրբ խօսքը լսելու:

### Տ Ե Ս Ի Լ Բ.

Ներս է մտնում Լէյլին:

Լէյլի. Բէկ, նորութիւններ ունեմ հաղորդելու քեզ:

Հուսէյն ըէկ. Ի՞նչ, ասա, Լէյլի, ի՞նչ նորութիւններ:

Շէյխ. Լէյլին խորամանկ է ինչպէս օձ և նրա աչքերը ոգևորութիւնից արդէն փայլում են:

Լէյլի. Այո, ես դիւրաշարժ եմ ինչպէս եղնիկ և ամեն բան տեսնում եմ և իմանում:

Հուսէյն ըէկ. Անշուշտ Սասունցիներին լըրտեսցիր, Լէյլի: Ասա, տեսնե՞ք ի՞նչ նորութիւններ ես բերել:

Լէյլի. Այո, ես նրանց դիրքերումն էի: Քիչ մնաց անիծուած կարօն ինձ գնդակահարէր, բայց փառք Ալլահին, ես փախուստ տուի և վրէժ-խնդրութեան կրակով լցուած եկայ յայտնելու, որ մենք մեր օջախի մէջ մի օձ ենք տաքացնում:

Հուսէյն ըէկ. Ի՞նչպէս թէ օձ, ասա շուտով:

Լէյլի. Այո, մի օձ, որ գաղտնի տեղեկութիւններ է տալիս Սասունցիներին և նրանք մեր ամեն քայլափոխը ուսումնասիրում են:

Հուսէյն ըէկ. Ո՞վ է, ասա, ես նրան պատառ պատառ կանեմ:

Շէյխ. Ասա, Լէյլի, ո՞վ է այդ օձը, որ մեր բանակից տեղեկութիւններ է տալիս գեաւուրներին:

Լէյլի. Գեաւուրի աղջիկը, ռես Սըգոյի դուստրը, Եղսօն:

Հուսէյն ըէկ. Ի՞նչպէս, այդ անհաւատալի է, Լէյլի, ինչպէս կարող է նա տեղեկութիւն տալ Սասունցիներին քանի որ նա իմ տան մէջ բանտարկուած է:



Լէյլի. Օ... Բէկ, դու չես ճանաչում գեա-  
ւուրի աղջիկներին: Գիշեր ցերեկ ես հետեւում  
էի նրա ամեն մի քայլափոխին և յանցանքի իսկ  
տեղը բռնեցի նրան: Ես տեսայ ինչպէս նա կա-  
տուի դիւրաշարժութեամբ դուրս սողաց վրանից  
և սկսեց նշաններով խօսել այն Սասունցու հետ  
որ բարձրացել էր անա այն ժայռի գլխին: Սա-  
սունցին էլ թաշկինակը փայտի ծայրին կապած  
ինչ որ նշաններով պատասխանեց Եղսոյին և  
երբ ինձ տեսաւ դեի նման չքացաւ: Անշուշտ  
Եղսօն կախարդութիւններ էր անում և ինչ որ  
հասկացնում Սասունցիներին:

Շէյխ. (Մօրուսը շփելով մտախոհ): Լա իլ Ալ-  
լահ, վախ Մահամէդ Ռասուլ Ալլահ... Բէկ, ասացի  
քեզ, որ այդ գեաւուրի աղջկան մօտդ մի պահիր,  
սպանիր, կտոր կտոր արա, երբ նա յամառում  
է քո գիրկը մտնել և մեր հաւատը չ'ընդունել:

Հուսէյն ըէկ. Բայց նա սիրուն է, շէյխ, և ես  
պահում էի նրան փաղիշահի համար:

Շէյխ. Նրանց սիրունները բոլորն էլ կա-  
խարդներ են և այդ կախարդներին պէտք է  
միայն խարոյկների վրայ այրել և մոխիրը քա-  
մուն տալ:

Լէյլի. Այո, շէյխ, միակ միջոցը խարոյկնե-  
րի վրայ այրելն է որ միւսներն էլ խելքի գան:

Հուսէյն ըէկ. Բայց ես հրապուրուած եմ  
զրա գեղեցիկութիւնով: Ես չէի ցանկանալ զրան  
խարոյկի վրայ տեսնել:

Շէյխ. Բէկ, կախարդներին պէտք է մեր  
բանակից վերացնել, որպէս զի մենք յաջողու-  
թիւն ունենանք: Այդ տեսակ սիրուն աղջիկներ  
մենք շատ ձեռք կը ձգենք, երբ Սասունը  
քար ու քանդ կանենք: Զուր դու մի հակա-  
ռակուի, այդ Ալլահի կամքն է և պէտք է կա-  
տարուի նրա սուրբ կամքը:

Հուսէյն ըէկ. Իսկ եթէ նա հաւատն ուրա-  
նայ, մեր ուղղափառ կրօնն ընդունի, այն ժա-  
մանակ ի՞նչ կասես, շէյխ:

Շէյխ. Լա իլ Ալլահ, վախ Մահամէդ Ռասուլ  
Ալլահ. այն ժամանակ ես ոչինչ չունեմ ասելու,  
թող կատարուի մեծ մարգարէի կամքը:

Հուսէյն ըէկ. Այո, թող կատարուի մեծ  
մարգարէի կամքը: (Դառնալով քրդերից մէկին):  
Էյ, Մահմէդ, Ալի, մօտ եկէք: Ահա հէնց այստեղ  
փայտ ու ցախ բերէք և մի փառաւոր խարոյկ  
պատրաստեցէք: Այդ խարոյկի վրայ պէտք է  
այրուի գեաւուրի աղջիկը, եթէ նա չի ընդունի  
մեր հաւատը:

Քուրդ. Կը կատարուի քո հրամանը, բէկ,  
և հինգ ըոպէ չանցած խարոյկը պատրաստ  
կ'լինի:

Հուսէյն ըէկ. Լէյլի, ինձ լսիր, Եղսոյին քեզ  
եմ յանձնում այստեղ բերելու: Գնա, պատրաս-  
տիր նրան, մագերը հիւսիր, ձեռքերը հինայիր  
և բեր այստեղ իւր հարսանիքի խրախճութեանը  
հանդիսատես լինելու: Հայերը շատ են սիրում



Լէյլի. Օ... Բէկ, դու չես ձանաչում գեա-  
ւուրի աղջիկներին: Գիշեր ցերեկ ես հետևում  
էի նրա ամեն մի քայլափոխին և յանցանքի իսկ  
տեղը բռնեցի նրան: Ես տեսայ ինչպէս նա կա-  
տուի դիւրաշարժութեամբ դուրս սողաց վրանից  
և սկսեց նշաններով խօսել այն Սասունցու հետ  
որ բարձրացել էր ահա այն ժայռի գլխին: Սա-  
սունցին էլ թաշկինակը փայտի ծայրին կապած  
ինչ որ նշաններով պատասխանեց Եղսոյին և  
երբ ինձ տեսաւ դեի նման չքացաւ: Անշուշտ  
Եղսօն կախարդութիւններ էր անում և ինչ որ  
հասկացնում Սասունցիներին:

Շէյխ. (Մօրուսը շփելով մտախօն): Լա իլ Ալ-  
լահ, վախ Մահամէդ Ռասուլ Ալլահ... Բէկ, ասացի  
քեզ, որ այդ գեաւուրի աղջկան մօտդ մի պահիր,  
սպանիր, կտոր կտոր արա, երբ նա յամառում  
է քո գիրկը մտնել և մեր հաւատը չ'ընդունել:

Հուսէյն քէկ. Բայց նա սիրուն է, շէյխ, և ես  
պահում էի նրան փաղիշահի համար:

Շէյխ. Նրանց սիրունները բոլորն էլ կա-  
խարդներ են և այդ կախարդներին պէտք է  
միայն խարոյկների վրայ այրել և մօխիրը քա-  
մուն տալ:

Լէյլի. Այո, շէյխ, միակ միջոցը խարոյկնե-  
րի վրայ այրելն է որ միւսներն էլ խելքի գան:

Հուսէյն քէկ. Բայց ես հրապուրուած եմ  
դրա գեղեցկութիւնով: Ես չէի ցանկանալ դրան  
խարոյկի վրայ տեսնել:

Շէյխ. Բէկ, կախարդներին պէտք է մեր  
բանակից վերացնել, որպէս զի մենք յաջողու-  
թիւն ունենանք: Այդ տեսակ սիրուն աղջիկներ  
մենք շատ ձեռք կը ձգենք, երբ Սասունը  
քար ու քանդ կանենք: Զուր դու մի հակա-  
ռակուի, այդ Ալլահի կամքն է և պէտք է կա-  
տարուի նրա սուրբ կամքը:

Հուսէյն քէկ. Իսկ եթէ նա հաւատն ուրա-  
նայ, մեր ուղղափառ կրօնն ընդունի, այն ժա-  
մանակ ի՞նչ կասես, շէյխ:

Շէյխ. Լա իլ Ալլահ, վախ Մահամէդ Ռասուլ  
Ալլահ. այն ժամանակ ես ոչինչ չունեմ ասելու,  
թող կատարուի մեծ մարգարէի կամքը:

Հուսէյն քէկ. Այո, թող կատարուի մեծ  
մարգարէի կամքը: (Դառնալով քրդերից մէկին):  
Էյ, Մահամէդ, Ալի, մօտ եկէք: Ահա հէնց այստեղ  
փայտ ու ցախ բերէք և մի փառաւոր խարոյկ  
պատրաստեցէք: Այդ խարոյկի վրայ պէտք է  
այրուի գեաւուրի աղջիկը, եթէ նա չի ընդունի  
մեր հաւատը:

Քուրդ. Կը կատարուի քո հրամանը, քէկ,  
և հինգ ըոպէ չանցած խարոյկը պատրաստ  
կ'լինի:

Հուսէյն քէկ. Լէյլի, ինձ լսիր, Եղսոյին քեզ  
եմ յանձնում այստեղ բերելու: Գնա, պատրաս-  
տիր նրան, մազերը հիւսիր, ձեռքերը հինայիր  
և բեր այստեղ իւր հարսանիքի խրախճութեանը  
հանդիսատես լինելու: Հայերը շատ են սիրում



հարսանիքներին դառուլ գուռնայով ուրախանալու և մենք էլ Եղսոյի հարսանիքին դառուլ գուռնայ կը հնչեցնել տանք: (Դուրս են գնում):

### Տ Ե Ս Ի Լ Գ.

Ներս են մտնում Կարօն, Արսէնը և մի քանի հայեր քրդի շորեր հագած:

Կարօ. Տղէրք, զգոյշ այս կողմն անցէք, որ մեզ քրդերը չ'ճանաչեն ապա թէ ոչ կորած ենք: Ահա տեսնում էք այն վրանը: Այն Հուսէյն բէկի վրանն է և այնտեղ է գտնուում Եղսօն: Յարմար ըռպէին, երբ մենք կ'յարձակուենք Հուսէյն բէկի վրանի վրայ Եղսոյին ազատելու, դարանի մտած մեր տղէրքը հրացանազարկ կանեն քրդերին մեր նշանը տալուն պէս, որպէս զի սրանց ուշադրութիւնը այն կողմը գրաւեն:

Արսէն. Բայց տեսնում ես, Կարօ, այն վրանի առաջ խիստ մեծ բազմութիւն կայ ժողովուած:

Կարօ. Տեսնում եմ, բարեկամ: Այնտեղ կարծես մի ինչ որ չար խորհուրդ են յղանում: Ահա երկու հոգի ցախ ու փայտ շալակներին դէպի այս կողմն են գալիս: Օ... սատանի ծնունդ, ես գուշակում եմ, հոգիս զգում է, նրանք խարոյկի պատրաստութիւն են տեսնում: Արդեօք ունի համար: Չլինի՞ թէ դեի աղջիկը իւր սպառնալիքն է ուզում կատարել և այդ բոլոր

պատրաստութիւնը քրոջ համար է: Օ... երկինք, խնայիք ինձ: Համբերութիւն տուր ինձ մինչև վերջին կաթիլը քամելու դառնութեան բաժակը:

Արսէն. Մի վրդովի՛ր, Կարօ, Հանդիստ պահիր քեզ ապա թէ ոչ մենք կը մասնուենք քրդերի ձեռքը: Մենք յաջողութեամբ մտանք քրդերի բանակը և այժմ հանգիստ աւանատես լինենք մինչև որ կը հասնի վճռական ըռպէն:

Կարօ. Այո, վճռական ըռպէին մենք մեզ չ'պիտի կորցնենք: Տէրը կը փրկէ մեզ և Եղսոյին: Բայց ահա և նրանք:

### Տ Ե Ս Ի Լ Գ.

Ներս են մտնում երկու քուրդ, շալակներին փայտ և ցախ ու կանգ առնում բեմի մէջ տեղ:

Քուրդ. Կանգ առ: Ահա այստեղ հրամայեց բէկը խարոյկ պատրաստել: Ես խոստացայ հինգ ըռպէյում պատրաստել, ձեռքերդ շարժիր: Նախ այս սիւնը ամրացրու և ապա փայտերը կարգին դարսիր, որ լաւ բոցավառուի:

Արսէն. (Նկատելով որ Կարօն ուզում է առաջ գնալ): Մի գնա առաջ, Կարօ, զուր կասկածներ մի յարուցանիր:

Կարօ. Թող ինձ: Եթէ գիտենամ երկինքը գլխիս փուլ կը գայ ես ամեն ինչ պէտք է իմանամ: (Առաջ գալով): Եղբայր, այդ ի՞նչ էք անում:



Ո՞ւմ համար և կամ ինչի՞ համար էք պատրաստում այդ խարոյկը:

Քուրդ. Մի կախարդի պէտք է այրենք, եղբայր: Բէկի հրամանն է, հանդիսաւոր կերպով այդ կախարդին պէտք է այրենք, որպէս զի Ալլաին մեզ յաղթութիւն տայ և բոլոր գեաւուրներին կոտորէ:

Կարօ. Թող անիծուեն այդ գեաւուրները: Մեծ է Ալլահի զօրութիւնը, նրանք ամենքը կը կոտորուեն: Բայց, ասա, եղբայր, ո՞վ է այդ կախարդը: Ես նրա մասին չեմ լսել:

Քուրդ. Ի՞նչպէս չե՞ս լսել: Մի՞թէ չ'գիտես, որ ռես Սրգոյի աղջիկը մեզ մօտ է, բէկի վրանում: Ահա կախարդը հէնց դա է և Լէյլին ասում է, որ դա ինչ որ թլիսմ է շինում, որպէս զի մենք յաջողութիւն չունենանք ու գեաւուրների թուրը կտրուկ լինի: Օ... եթէ այդ աղջիկը իւր հաւատը չուրանայ, այս խարոյկի վրայ փառաւոր խորոված կը լինի և մի պատան էլ կուղարկենք նրա եղբօրը՝ Կարօյին, որ Սասունի ծերպերում նստած մեր մարմինները գնդակներով է ծակծակում և աղցան դարձնում:

Կարօ. Ապրի մեր բէկը, թող Ալլահը օրհնէ նրա կեանքը, որ այդ տեսակ կախարդներին հրաման է տալիս այրելու:

Քուրդ. Ասում են, որ այդ անիծուած գեա-

ւուրներն էլ մերոնց հետ են այդպէս վարւում: Բայց անա բէկը ինքն է գալիս:

Կարօ. Այո, բէկը ինքն է գալիս: (Հեռանում են բեմի խորքը):

## Տ Ե Ս Ի Լ Ե.

Ներս են գալիս Հուսէյն բէկ, Շէյխ, քրդեր:

Հուսէյն բէկ. Ապրես, Մահմադ, դու լաւ խարոյկ ես շինել:

Քուրդ. Թող Ալլահը պահէ քեզ, բէկ, հարիւրաւոր այս տեսակ խարոյկներ կը շինեմ միայն թէ այրուին գեաւուրները և աշխարհի երեսից ջնջուեն:

Շէյխ. (Դառնալով ժողովրդին և բարձրանալով քարի վրայ). Մեծ է Մարգարէի զօրութիւնը և նրանից տւելի մեծ Աստուած չկայ և չէ եղել: Ուղղափառներ, լաւ լսեցէք իմ խօսքերը և վրէժխնդրութեան բոցով լցրէք ձեր սրտերը բոլոր գեաւուրներին բնաջինջ անելու աշխարհի երեսից և նրանց ինչքն ու գոյքը գրաւելու: Այդ է ասում Ալլահը և Ալլահի մեծ փառիշահ Սուլթանը հրամայում է ձեզ կոտորել հայերին, կոտորել մեծին և փոքրին առանց խնայելու, որ արժանի լինէք նրա արքայութեանը: Մեր մեծ մարգարեն, Մահմէդը, թող օրհնեալ լինի նրա անունը, երբ որ գրեց իւր սուրբ գիրքը՝ Դուրանը, հրաման արձակեց կոտորել, բնաջինջ



անել բոլոր գեաւուրներին, ով մեր ուղղափառ գաւառութիւնը չի ընդունիլ: Մի խնայէք մեծին ու փոքրին, լինի դա կին թէ մարդ, աղջիկ թէ տղայ և դուք արժանի կը լինէք մեծ մարգարէի հուրիներին: Ձեր եղբայրները այդ հուրիներին արժանի լինելու համար, ուրիշ քաղաքներում, արդէն սկսել են կոտորածը և գեաւուրների արիւնը արդէն գետերի նման է վազում: Վանը, Բիթլիսը, Երզնկան, Տրապիզոնը և ուրիշ քաղաքները արդէն մաքրուած են գեաւուրներից և ոչ մէկը նրանցից այլ ևս կենդանի չէ մնացել: Մի վախենաք Սասունի ապառաժոտ լեռներից, նրանց մի բռնուն քաջերի գնդակներից և առաջ անցէք կոտորելու նրանց: Վաղը կամ միւս օրը կ'որոտան մեր փաղիշահի թնդանօթները և Սասունը այլևս քար քարի վրայ չի մնալ: Իբրև առաջին օրինակ թէ ինչպէս պէտք է վարուել գեաւուրների հետ, ահա այս խարոյկի վրայ մենք կը բարձրացնենք նրանց աղջիկներից մէկին, ռես Սրգոյի աղջկան, որպէս զի ձեր սրտերի միջից անհետանայ գթութեան և խղճի վերջին կայծը և անխնայ, առանց մի փոքր խղճի կայծ զգալու ոչնչացնէք մեծին ու փոքրին ամենախիստ տանջանքներով: Եւ թող Ալլահը օրհնէ ձեր բազուկները և ձեր սուրը կտրուկ անէ: Մահմադ, բեր գեաւուրի աղջկան:

Ամբոխը. Ալլահ, Ալլահ, թող կոտորուին գեաւուրները:

## Տ Ե Ս Ի Լ Զ.

Ներս ևն բերում Եղսոյին ձեռքերը կապած:

Կարօ. (Մի կողմը, Արսէնին): Քոյրս, ախ, ինչքան գունատ է:

Արսէն. Ձգոյշ, Կարօ, ոչ մի բառ թէ չէ կորած ենք թէ մենք թէ քոյրդ:

Կարօ. Արդարև մեզ և Եղսոյին սառնասըրտութիւնը կը փրկէ: Բայց, Արսէն, չէ՞ որ իմ ջղերը երկաթից չեն, ես էլ մարդ եմ:

Արսէն. Լուս կաց և հետևիր. վճռական ըռպէն մօտենում է:

Շէյխ. Գեաւուրի աղջիկ, առաջ եկ և ինձ լսիր:

Եղսօ. Ի՞նչ ես կամենում ինձնից: Ասա, եթէ իմ մահն ես ուզում, ես պատրաստ եմ մեռնելու: Սասունցի աղջիկը մահից չի վախենում:

Կարօ. (Մի կողմը): Ապրես, անունիդ մեռնեմ:

Հուսէյն բէկ. Այո, դու կ'մեռնես, գեաւուրի աղջիկ, տես, այս խարոյկը քեզ համար է պատրաստ, բայց ափսոս ես, դու մեր փաղիշահի հարեմի լաւ զարդը կարող ես լինել: Ուրացիք հաւատդ, ընդունիր մեր ուղղափառ կրօնը և դու կապրես:

Եղսօ. Դու մոլորուել ես, բէկ, և դուր ժա-



մալաճառ ես լինում այդ մասին: Ռես Սրգոյի աղջիկը երբեք չի ընդունի ձեր պիղծ կրօնը և նա կայրուի այդ խարոյկի վրայ:

Ամբոխ. Մահ գեաւուրին, մահ կախարդին:

Կարօ. (Մի կողմը, Արսէնին): Արսէն, հասիր, նշանը տուր, ուշացնել այլ ևս անկարելի է: Մենք կը մեռնենք, բայց Եղսոյին պէտք է ազատել:

Արսէն. Մի վայրկեան և հրացանների որոտը կը լսես, բայց դու պահիր քեզ, Կարօ, անզգոյշ քայլ մի անիր: (Գնում է):

Կարօ. Դու գնա, իմ մասին մի մտածիր: Օ... երկինք խնայիր ինձ և Եղսոյին այս բարբարոսների ձեռքից ազատիր:

Շէյխ. Յամառ աղջիկ, ընդունիր մեր կրօնը և գեղեցիկ մարմինդ կրակէ բոցերին մի մատնիր:

Եղսօ. Օ, ո՛չ, դուք սխալւում էք: Ոչ մի տանջանք ինձ չի կարող ստիպել իմ նախահայրերի հաւատն ուրանալ և ընդունել ձեր պիղծ հաւատը:

Ամբոխը. Ալլահ, Ալլահ... Նա հայհոյում է մեր հաւատը: Այրեցէք նրան, տանջեցէք նրան:

Հուսէյն քէկ. Կապեցէք այդ գեաւուրի աղջկան, դրէք նրան խարոյկի վրայ: Վառեցէք կրակը և թող գեաւուրի աղջկայ ճենճերային հոտը Սասունցիներին հասնի գուցէ թէ խորովածի ախորժակները բացուեն: (Կապում են, բարձ-

բացնում են խարոյկի վրայ. իսկ մէկը վառում է ցախը):

Շէյխ. Այրուիր, տանջուիր, չարչարուիր, որ սիրտս հովանայ: Քո եղբայրները մերոնցը շատ են տանջել... (Հրացանների ձայններ): Բայց այս ի՞նչ է:

Հուսէյն քէկ. (Շփոթուած): Մահմադ, վազիր, հասիր, թէ ի՞նչ հրացանի ձայններ են: Զլինի թէ գեաւուրները յանդգնութիւն ունեցան մեզ վրայ յարձակելու:

Արսէն. (Առաջ գալով): Բէկ, մենք կորանք, հասէք, օգնեցէք, գեաւուրները մեծ քանակութեամբ մեզ վրայ եկան (Իրարանցում է ընկնում):

Բէկ. (Կատաղած): Տղերք, ձեզ տեսնեմ, հասէք, գէնքերդ առէք, կոտորեցէք գեաւուրներին: Մահմադ, գեաւուրի աղջկան պահպանութիւն արա, սա մեր ձեռքից չի ազատուի:

Լէյլի. Դուք գնացէք, բէկ, Եղսոյի հոգսը ինձ թողէք: Ես դորան ափսիսի դանդաղ կրակով այրեմ, որ Կարօյի աչքերից արիւն արցունք քամուի երբ տեսնի քրոջ խորոված մարմինը: (Քրդերը վազում են. մնում է մի քուրդ, որը կրակ է անում և Լէյլին):

(Կարօն մի քանի ընկերներով հեռուն է քաշւում):

## Տ Ե Ս Ի Լ Է.

Լէյլի. Սիրուն Եղսօյ, ծուխը հօ քեզ չէ հեղացնում. մի վախիր, իմ աննման Եղսօյ, դա



քրդերի վարդի բուրմունքն է գեաւուրների համար:

Եղսոյ. Օ... անիրաւ Լէյլի, դու հեգնում ես ինձ, դու ծաղրում ես ռես Սրգոյի աղջկան, որից հազարաւոր բարութիւններ ես ստացել երբ դու և հայրդ ծառայում էիք նրան: Աստուած արդարադատ է Լէյլի, նա քեզ անպատիժ չի թողնի:

Լէյլի. Հայի Աստուածը զօրութիւն չունի, Եղսոյ, քրդի Աստուածն է զօրաւոր: Դու կ'այրուես, կը մղկտաս այնպէս, ինչպէս քո եղբայրը՝ Կարօն ինձ մղկտացրեց: Ես նրանից սէր խընդրեցի նա ինձ արհամարանք տուեց, ես հաց ուզեցի նրանից նա քար տուեց, ջուր ուզեցի, լեղի տուեց: Նա չ'ինայեց մինչև իսկ քո մատաղ կեանքը և քեզ խարոյկի մատնեց: Այրուիւր ուրեմն, այս մութ ու խաւար տեղը լուսաւորիր ինչպէս մի բոցավառ փունջ, որ այրուած սիրտս հովանայ:

Եղսոյ. Օ... Աստուած իմ...

Լէյլի. Մահմադ, շուտ կըսկը խառնիր, որ հուրը բորբոքուի:

### Տ Ե Ս Ի Լ Ը.

Ներս են վազում Կարօն և իւր ընկերները և սրի մի հարուածով գետին գլորում Մահմադին:

Կարօ. (Բռնելով Լէյլիին և ձեռքը դնելով բերանին):

Սնւս, ոչ մի ձայն ապա թէ ոչ սրի հարուածով գետին կը տապալուես: Տղէրք, շուտ ցած բերէք Եղսոյին: Այժմ Լէյլիին է հարկաւոր Եղսոյի տեղ դնել: Ուրիշին հօր փորովը ինքը պէտք է մէջն ընկնի և Եղսոյի համար պատրաստուած խարոյկի վրայ թող Լէյլին այրուի:

Եղսոյ. Աստուած իմ, ո՞ւր եմ ես:

Արսէն. Դու փրկուած ես, Եղսոյ: Նայիր, առաջդ Կարօն է կանգնած:

Եղսոյ. (Փաթաթուելով): Եղբայրս, Կարօն:

Կարօ. Լնւս, ոչ մի խօսք, վտանգը դեռ չէ անցել: Տղէրք, տարէք սրան մինչև ես ձեզ կը հասնեմ ու այս քրդի աղջկան դաս կը տամ: (Եղսոյին տանում են):

Կարօ. (Դառնալով Լէյլիին): Լսիր ինձ, Լէյլի: Քո զարհուրանքով պատած աչքերից ես գուշակում եմ, որ դու ինձ արդէն ճանաչեցիր: Քրդի շորերի մէջ հայի կորիւնն է նստած, քո սիրած Կարօն, որին դու սպառնացիր քրոջը խարոյկի վրայ այրելու: Դու կատարում էիր վրէժդ, Եղսոն արդէն խարոյկի վրայ էր բարձրացրած բայց հայի Աստուածը նրան օգնութեան հասաւ, ու փրկեց նրան:

Լէյլի. Ալլահ...

Կարօ. Քո Ալլահին մի կանչիր, աչքերդ զարհուրանքով մի լցնիր: Դու ծաղրում էիր Եղսոյին, թքում ու հայոյում նրան, հրճում և ուրախանում նրա տանջանքներով այժմ թոյլ



տուր ես ուրախանամ քո տանջանքներով: Այ-  
րուիր դու խարոյկի վրայ, որ դառնացած սիրտս  
մի փոքր քաղցրանայ, բորբոքուած հոգիս խա-  
ղաղուի և վրէժխնդրութեանս թափը իջնի: Օ...  
Լէյլի, այդ գազանական յակումը դուք, քրդերդ  
մեզ սովորեցրիք: Գառնուկներից գազաններ  
ձեռնկերպեցիք և այժմ քաղեցէք ձեր իսկ ցա-  
նած պտուղները: Հը՛, ի՞նչ է, բերանդ փակուած  
է, ձայն չես հանում բայց ի՞նչու մարմինդ ցըն-  
ցիւններ է անում... Օ... այդ ցնցիւնները  
սրտիս քնքոյշ լարերն են շարժում և մի տեսակ  
անոյշ բերկրանք տալիս ինձ... Մի՛ մոռանար,  
Լէյլի, որ դարեր շարունակ ձերոնք մեզ կեղե-  
քում էին, մորթեղերձ անում, մեր գոյքն ու  
պատիւը տանում և մենք անմոռնչ դառների  
նման ձայն ծպուտ չէինք հանում: Դուք մեզ  
սովորեցրիք թողնել մաճն ու գութանը, դաշտն  
ու անդաստանը և Լինչի օրէնքով, ակն ընդ  
ական և ատամն ընդ ատաման վարուել և մենք  
այժմ այդպէս ենք վարւում: Մի՛ նեղանաք մե-  
զանից: Մեր վարժապետները դուք էք, մենք  
ձեր աշակերտներն ենք, վայելեցէք ձեր իսկ  
ցանած պտուղները:

Լէյլի. Հը՛մ... Օ...

Կարօ. (Կրակը խառնելով): Վառուի՛ր խարոյկ,  
վառուի՛ր... կատաղի լեզուներով սիրուն Լէյ-  
լի մարմինը լիզի՛ր, նրա քնքոյշ մարմինը  
խորովի՛ր ու իմ սրտին զովութիւն տուր...

(Կանգ առնելով և շփելով ճակատը): Բայց ի՞նչ եմ  
անում ես, ի՞նչ սոսկալի գործողութիւն եմ կա-  
տարում... Գազան է մտել սիրտս թէ՛ խելքս  
եմ կորուսել... Օ, Լէյլի, դու չես մեռնի,  
կրակէ բոցերը քեզ չեն լափի: Ես կը հանգցնեմ  
այս կրակը (մօտենում է և հանգցնում), որ դու  
տեսնես, որ հայի մէջ կորած չէ մարդկութեան  
խիղճը, որ նրա մէջ չէ նստած գազան հրէշը,  
որը դիւական քրքիջ է արձակում մարդկային  
տանջանքները տեսնելիս... Մնաս բարեւ, իմ  
անգին Լէյլի, մենք այլևս չենք տեսնուիլ: Ահա  
բերանիդ կապն էլ բանամ, օգնութիւն կանչիր,  
որ ձերոնք վրայ հասնեն ու քո Կարօյի մար-  
մինը յօշոտեն... (Դուրս է վազում):

Լէյլի. Օ... Կարօ՛, դու յաղթեցիր ինձ...  
(Ներս են մտնում դանազան կողմերից քրդեր և տես-  
նելով Լէյլիին խարոյկի վրայ, ազատում են):

Քրդեր. Աման, Ալլան, Ալլան...

Վ. Ա. Բ. Ա. Գ. Ո. Յ. Բ.:





## ՀԻՆԳԵՐՈՐԴ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ

Ժայռեր. Ժայռերի մէջ տեղ հովիտ, հովտի մէջ զանա-  
զան զիրքերով սպանուածներ և վիրաւորներ: Սպանու-  
ածների մէջ կան երեխաներ, կանայք, ծերեր և  
երիտասարդներ: Լուսնկայ գիշեր:

### Տ Ե Ս Ի Լ Ա.

Ժայռերի վրայից ցած են գալիս Կարօն և Քրիստինէն:

Քրիստինէ. Կանգ առ, Կարօ, այլևս առաջ մի  
գնա ապա թէ ոչ քրդի գնդակը քեզ չի խնայի:

Կարօ. Օ, թող ինձ, ես ուզում եմ իմ քոյրերի  
և եղբայրների անշնչացած դիակները տեսնել. լսել  
նրանց մահամերձ, օրհասական հառաչանքները:  
Տեսնել անմեղ մանուկների արհաւիրքով լի  
աչքերը... Օ... Քրիստինէ, այս ինչ օրի հա-  
սանք..., բայց տես, տես ահա մեր առաջ բաց-  
ւում է հովիտը, մեռելների հովիտը, ուր անի-  
րաւ քրդերը իրենց գազանութիւնների ասպա-  
րէզ են ընտրել: Ինձ ասում էին, որ շրջակայ  
հայ գիւղերից մեծ ու փոքր, երեխայ թէ կին  
ժողովելով այստեղ էին բերում ու մորթոտե-  
լով՝ դիակները շարտում այստեղ, որպէս զի

հսկայ Սասունը շարժուի, խոնարհուի նրանց ա-  
ռաջ... Օ... Երկինք, խնայիր իմ ջղերը:

Քրիստինէ. Կարօ, խնայիր ինձ... առաջ մի  
գնա: Ծնկներս դողում են, աչքերս մթնում,  
ուշք ու միտքս խաւարում: Տես, ահա ինչպէս  
այն վիրաւորը տանջւում է, աղեկտուր հառա-  
չանքներ արձակում ու մահուան հետ կուռում:

Կարօ. (Կանգ առնելով և գլխարկը վերցնելով):  
Մահը... Ահա մահը. իսկական մարտիրոսների  
ու նահատակների մահը... Արհաւիրքով լիքն են  
այս գոհերի դէմքերը: Զարհուրանքն ու սար-  
սափը իրենց անողորմ կնիքն է դրել սրանց  
գունատ դէմքերին... Օ... Ինչ տաժանելի հո-  
գեկան տանջանք կը լինեն կրած սրանք այն  
ժամանակ, երբ գազան քրդերը անասելի տան-  
ջանքներ էին հասցնում սրանց: Այդ վայրկեան-  
ները ձիգ ու անվերջ տարիներ կը լինէին, երբ  
սոսկումը և արհաւիրքը իւր հունձն էր անում...  
Մահ... ահա մահ... Ահա մարտիրոսներ, իս-  
կական նահատակներ, անխիղճ ու գազանային  
ոճիւրների զոհեր. Օ... քոյրեր ու եղբայրներ...  
Զեր այդ զարհուրանքով լցուած աչքերը, եռաց-  
րած արիւնս ցամաքացնում են երակներին մէջ,  
գիտութիւնս մթնեցնում, խաւարեցնում ու ինձ  
ձգում անծայր վշտի ու յուսահատութեան մէջ...

Քրիստինէ. Այո անծայր վշտի ու յուսահա-  
տութեան մէջ... Բայց ի՞նչ օգուտ մեռելներին:  
Ապրողներն են մեղք, նրանք են, որ դեռ պիտի



տնքան, հեծեծեն ու ապա մեռելները հովիտը ստուարացնեն:

Կարօ. Քրիստինէ, ասա ինձ, ի՞նչ է կեանքը և ի՞նչ է մահը: Այս բոլորն էս գտնուում եմ հոգեկան մի աշխարհի ծանր, տագնապալի վշտի մէջ, որ մարդկային կեանքի վեհ նշանակութիւնն եմ մոռացել: Ասա, ի՞նչու մարդիկ ծնուում են, ապրում, մեծանում և մեռնում: Բնութեան ծաղր է արդեօք թէ Աստուածային մի հեգնանք, անբացատրելի, անհասկանալի մի խաղ... Օ... խելագարուելու չափ ցնցում է ուղեղս, երակներս մէջ սոսկումից գոլորշիանում արիւնս:

Քրիստինէ. Ի՞նչ ասեմ քեզ, սիրելի Կարօ, մարդկային կեանքը, դու լաւ նկատեցիր, բնութեան մի ծաղր է, Աստուածային հեգնանք: Նա քաղցր է ու անոյշ, ինչպէս արևի անդրանիկ կենսատու ճառագայթը. կամ լուսաբացի սոխակի քնքոյշ դալարայէկը և միևնոյն ժամանակ դառն ինչպէս լեղի, ահաւոր ու սոսկալի ինչպէս գեհեն... Բայց մենք գնանք դէպի լեռները, տես առաւօտուայ զով քամին է սուլում, քիչ էլ և խաւարը կանցնի ու լոյսը կը բացուի որպէս զի քրդերը նոր թափով մեզ վրայ յարձակուեն և Սասունը հիմնայատակ անեն:

Կարօ. Օ... Քրիստինէ, քիչ էլ սպասիր (Քամին սուլում է): Օ... սուլի՛ր քամի, ոռնայ քո բոլոր թափով ու իմ դառնացած սիրտը լցրուանվերջ կսկիծով... Քո այդ ոռնոցով թող մեռել-

ները շարժուեն, քարերը լեզու առնեն, ծառն ու թուփը տնքան, հեծեծեն ու աշխարհը իւր ամբողջ թափով շարժուի... (Նորից քամի և խուռ որոտ ու կայծակ): Գեհեն բաց արա քո մահաշունչ բերանը, կրակէ քուլաներ, թափուեցէ՛ք զլիս ձեր ամբողջ զանգուածով և ինձ հովութիւն տուէ՛ք, սրտիս սարսափը մեղմացրէ՛ք: Այստեղ, սրտիս մէջ, աւելի ահաւոր դժոխքն է տիրում, ցաւոտ հեւքերի սարսափը հնչում և ծանր սոսկումի հառաչը լսում... Մա՛րդ... բանական աւարած... Հը՛մ, զագիր հեգնանք... Մարդը ի՞նչ է, եթէ ոչ սոսկալի տանջանքներին մի բոյն, դառն հեծեծանքների մի աւագան... Օ... սիրելի, անգին Քրիստինէ (բռնում է ձեռքերը), ասա, ի՞նչու իմ կրծքի տակ դեռ բաբախում է վշտերով լի սիրտս... (Քամու սուլոց): Բայց ահա կըրկին ոռնում է քամին: Մեռելներն են խօսում, քարերը հեծկլտում, բնութիւնը տնքում: Ունացէ՛ք մեռելներ, ոռնացէ՛ք ձեր ամբողջ թափով, որ կենդանիները լսեն ձեզ ու ձեր արհաւիրքով լի աչքերը փակեն...

Քրիստինէ. Բայց գնանք այստեղից, սիրելիս, սոսկումը և արհաւիրքը հետգհետէ պատում է սրտիս և մի անհասկանալի յոյզ ինձ ձգում է անծայր յուսահատութեան մէջ: Ա՛խ, իմ լի բերկրանքով ցնորքներս օդի մէջ ցնդուեցան և խաղաղ, կուտուրական կեանքի փոխաբէն ծով արցունքներ ստացայ:



Կարօ. Իմ սիրելի, իմ թանկագին, իմ ան-  
նման Քրիստինէ: Ուրեմն դու դեռ չես ճանա-  
չում կեանքը: Դու միամիտ ես ինչպէս անմեղ  
զառն: Չէ՞ որ դու պէտք է որ գուշակէիր թէ  
ի՞նչու մենք Սասունի վիթխարի լեռներից մե-  
ռերների հովիտը իջանք: Օ՛, Քրիստինէ, ասա,  
եթէ դու արդարեւ մահից վախենում ես, եթէ  
դու արդարեւ չ'գիտես ի՞նչ է մահը. ազնիւ, վեհ  
մահը, այն ժամանակ ես պատրաստ եմ քեզ  
տանել մի ուրիշ աշխարհ, ուր...

Քրիստինէ. (Ընդհատելով): Լսիր, Կարօ, լսիր,  
թող քո շրթունքները չ'արտասանեն իմ վերա-  
բերեալ աննպաստ բառեր: Ես ամեն ինչ հաս-  
կանում եմ: Ասա, հրամայիր, ես էլ պատրաստ  
եմ իմ քոյրերի հետ միասին մարտիրոսների  
պսակը ընդունել:

Կարօ. Իմ թանկագին Քրիստինէ, այո, ես  
համոզուած եմ, ես գիտեմ, որ դու արժանի ես  
և իմ ամեն քայլափոխին գիտակցաբար ես վե-  
րաբերում: Այո, ես քեզ բերի մեռելների հովի-  
տը, որ դու տեսնես ու զգաս թէ ի՞նչ է մահը,  
մարտիրոսների ու նահատակների մահը: Ես  
գիտեմ, որ դու մեր պատմագիր Նդիշէի ան-  
մահ բառերը անգիր գիտես թէ «մահ չիմացեալ  
մահ է, մահ իմացեալ անմահութիւն»: Այս  
մահը, ինչ մահով մեռան մեր քոյրերն ու եղ-  
բայրները ոչ թէ մահ է այլ անմահութիւն:  
Նրանի նրան ով այսպիսի մահով կը մեռնի: Նւ

մենք, սիրելի Քրիստինէ, ահա այդպիսի մահով  
պիտի մեռնենք:

Քրիստինէ. Գիտեմ, այո մեզ փրկութիւն  
չկայ...

Կարօ. Ո՛չ, դու դեռ չ'գիտես: Սոսկալի ի-  
րողութիւնը մինչև հիմա ես ծածկում էի քեզա-  
նից բայց այժմ այլևս չեմ կարող ծածկել  
քեզանից: Մինչև հիմա Սասունի հսկայ ժայռերը  
գիմադրում էին քրդերի յարձակումներին, բայց  
այժմ այլ ևս անկարող են դիմադրել: Նրանք կը  
խորտակուին, կ'ոչնչանան ինչպէս մի փերուն  
հողի կոյտեր և այնտեղ քար քարի վրայ չեն  
մնալ:

Քրիստինէ. Ինչպէս. ի՞նչ է պատահել: Մի-  
թէ յուսահատութեան անողորմ ոգին պատել է  
Սասունի հայ կտրիչներին կամ զէնքն ու ռազ-  
մամթերքը հատել, վերջացել: Օ՛, եթէ այդ է,  
եւ նրանց մէջ հոգի ու սիրտ կը ներշնչեմ ու  
ժայռերի բեկորներով թշնամիներին կը ջախ-  
ջախեմ:

Կարօ. Օ՛, ոչ, իմ սիրելի Քրիստինէ, Սա-  
սունցու սրտի մէջ նստած է անվեհերութեան  
ոգին: Նա կը մեռնի իւր հայրենիքի համար,  
սակայն նա չի կարող գիմադրել այն ամենի զօ-  
րութեանը որպիսին նրա զէնն են հանում նրա  
թշնամիները: Մինչև հիմա մենք կուռում էինք  
քրդերի անկանոն խմբերի դէմ, սակայն հիմա  
կանոնաւոր զօրքն է միջամտում և Սասունը



Թնդանօթների ումբերի տակ կը խորտակուի, կ'ոչնչանայ և քար քարի վրայ չի մնալ: Կայրուի Սասունը և մենք մինչև վերջին մանուկը կ'ոչնչանանք...

Քրիստինէ. Բայց միթէ փրկութեան ոչ մի ճանապարհ չկայ:

Կարօ. Ոչ մի ճանապարհ:

Քրիստինէ. Բայց Եւրոպան, լուսաւոր և բրիստոնեայ Եւրոպան միթէ թոյլ պիտի տայ կործանուել մի բուն անմեղ ժողովուրդ:

Կարօ. Նա լուռ է և անզգայ: Յոյս դնել Եւրոպայի գթութեան վրայ երազ է և ցնորք: Կարմիր Սուլթանը հայի արեան մէջ է ուզում լողալ և նրան ոչոք արգելք չի կարող լինել: Եւ մենք պիտի թափենք մեր արիւնն էլ, որ կարմիր Սուլթանի աւագանը լցուի:

Քրիստինէ. Թող կատարուի Աստուծոյ կամքը, Կարօ, եթէ մեր քոյրերն ու եղբայրները մեռան, մենք էլ պարտական ենք մեր արիւնը թափել:

Կարօ. Ապրես Քրիստինէ, ես սխալուած չեմ եղել: Այո, մենք պիտի մեռնենք այնպէս, ինչպէս մեր եղբայրներն ու քոյրերը մեռան: Եւ հեռու չէ այդ բոլէն: Շուտով արշալոյսը կը բացուի և Թնդանօթների գոռ ձայները կորուտան Սասունի շրջակայքում և նրա ումբերը կը խլեն մեր քաջերի կեանքերը և նրանց դիրքերը ցաք ու ցրիւ կը տան:

Օ, այդ ժամանակ, երբ նրանց խուժանը գրոհ կը տայ մեզ վրայ, պատրաստուի՛ր մեռնելու և մենք միասին կերթանք ոգիների աշխարհը:

Քրիստինէ. Ես պատրաստ եմ մեռնելու հէնց այս վայրկեանիս:

Կարօ. Եթէ մի բոլէ, մի վայրկեան մօտեցող վտանգը քեզ սարսափեցնում է, առա ինձ, հրամայի՛ր և ես պատրաստ եմ քեզ այդ վտանգից ազատելու: Ես մի վայրկեան կը թողնեմ իմ եղբայրներին ումբերի տակ մեռնելու ու քեզ կազատեմ վերահաս մահից: Գնա, ապրիր, արևի լոյս տես, կեանք վարիր, բայց քո Կարօն պիտի վերադառնայ իւր եղբայրների հետ մեռնելու ու նրա այդ վճիռը անդրդուելի է:

Քրիստինէ. Կարօ, լռիր և իմ վերջին վայրկեանները մի՛ դառնացնիր: Չէ՞ որ մենք երդուել ենք ապրել և մեռնել միասին, Եւ Քրիստինէն գիտէ իւր խօսքը պահել: Նա գիտէ սիրել և մեռնել: Դու, իմ արև, իմ հերոս, մի կարծիր թէ երբ և է Քրիստինէն կը դողայ մահուան առաջ: Օ, ոչ նա կ'մեռնի հերոսի պէս, եթէ այդ անհրաժեշտ է:

Կարօ. Դու քո անվեհեր խօսքերով իմ սիրտը անհուն բերկրանքով ես լցնում, Քրիստինէ: Օ, մեռնելիս անհուն ժպիտը կը փայլի դէմքիս ու սիրտս կը լցուի անսւշ բերկրանքով: Տուր ուրեմն ձեռքդ սեղմեմ, մի անգամ էլ անվեհեր ճակատդ համբուրեմ: (Համբուրում է):

Քրիստինէ. Ահա սու ո՛ր: (Սուրբ հանելով): Այս



սուրը ես վերջին րոպէյիս համար էի պահում։  
Ես գիտէի, որ մեր կեանքը սրահով կ'վերջանայ  
այս զուլում աշխարհում և ինչպէս մի թանկագին  
գանձ պահում էի ինձ մօտ։ Մէկ էլ համբուրու-  
ենք և ես ինքս այս սիրուն սուրը սիրտս կը  
մղեմ։ Մի վախիւր, ձեռքս չի դողայ և վճռական  
կամքս չի թուլանայ։ (Ուզում է խփել)։

Կարօ. Օ՛, ոչ, սպասիր, Քրիստինէ, վերջին,  
վճռական րոպէն դեռ չէ հասել։ Այդ քայլով  
մենք վատ օրինակ կը լինենք մեր կտրիճներին,  
որոնք ահա այս ժայռերի ծերպերին կուրծքերը  
անվեհեր դէմ են տուել թշնամու գնդակներին։  
Իմացիր, որ եթէ թշնամու մահաբեր գնդակը  
ինայի մեզ և երբ տեսնենք Սասունը ծխի և  
մխի մէջ, երբ տեսնենք, որ մեր քաջերը ար-  
դէն բոլորը քնել են յաւիտենական քնով, այն  
ժամանակ միայն այդ փայլուն սուրը վերջ կը  
դնի մեր կեանքերին։ Բայց բաւական է արդէն։  
Բարձրանանք լեռները, հոգի ու շունչ տանք մեր  
եղբայրներին ու քոյրերին և ապա մեր երգումը  
կատարենք։

### Տ Ե Ս Ի Լ Բ.

Ներսէ մտնում Խաթունը զգզողւած մագերով, պատա-  
ռոտուած շորերով և մի բանի խուրձ խոտ ձեռքին։

Խաթուն. Է՛յ, սե սե ագռաւներ, բուեր ու

չղջիկներ։ Ահա այնտեղ է նա պառկած, սիրուն,  
սե սաթի նման աչքերը յառած։ Ձեր չարագու-  
շակ վոյվոյոցը սկսեցէք ու սիրուն աչքերը  
հանեցէք... Քը՛շ, քը՛շ, քը՛շ, անիրաւներ... (Մօ-  
տենալով)։ Բարով քեզ, Հուսէյին բէկ, համեցէք,  
հարսանիք է, իմ սիրուն Եղսօյի հարսանիքը...  
հա... հա... հա...

Կարօ. Մայր իմ... Օ՛, դժոխք, քրքրիր սիրտս,  
պատառ պատառ արա կուրծքս ուր ամբարուած  
է վշտերի մի ովկեան։

Խաթուն. Գիտէս, հարսի, Եղսօյին տարան  
քրդերը, կրակ վառեցին, խարոյկ կազմեցին ու  
այդ խարոյկի վրայ խորոված արին։ Այնպէս  
անո՛ւշ էր այդ խորովածը, այնպէս համեղ, որ  
ես քիչ մնաց խելքս կորցնէի։ Խի... խի... խի...  
ագռաւները նրա մի աչքն են հանել, իսկ բուն,  
այ տես, այնտեղ նստած ինձ է նայում։

Քրիստինէ. Խեղճ պառաւ, Եղսօյի մահից  
յետոյ նրա գիտակցութիւնը խաւարեց ու էլ  
ետ չեկաւ։

Կարօ. Այո՛, կսկիծը, վիշտը և հոգեկան  
դառն տանջանքները դորա խելքը թոցրին ու  
դորան այս օրը գցեցին։ Սասունի քարերը կըս-  
կծից թորշոմեցան ուր մնաց մի պառաւ կին,  
որի առաջ սիրասուն դուստրը գնդակահար ե-  
ղաւ։ Յիշում ես, Քրիստինէ, այն օրը, երբ  
Եղսօյին խարոյկի վրայից ազատելով ողջ ու ա-  
ռողջ բերինք նրան Խաթունի ձեռքը յանձնե-



ցինք: Օ... խելագարի նման նա համբոյրներով էր ծածկում իւր աղատուած դասեր թորշոմած այտերը, երբ թշնամու գնդակը հասաւ ու ձօր ձեռքից խեց նրա սիրասուն դասեր կեանքը: Ախ, զարհուրելի էր այդ վայրկեանը մօրս համար:

Խաթուն, Առէք այս խոտերը և ճանապարհին ցանեցէք, որ մեռելները սրա վրայ անցնեն ու կենդանանան: Եղսօն էլ մեռած էր և կենդանացաւ: Գնդակը ուղիղ նրա կուրծքն էր ծակել բայց շուրջը ալ կարմիր վարդերով ծածկուել: Չէք հաւատում, նա կենդանացաւ, ահա նա, ահա նա, ճ ի՞նչ սիրուն է... Եղսօ Եղսօ... Գալիս եմ աղջիկս... (սկսում է պարել ու երգել): Ուրախ կացէք այ դրկիցներ, մեր Եղսօյի հարսանիքն է: (Կարօն ատրճանակը հանում է):

Քրիստինէ. (Նկատելով այդ): Ի՞նչ ես անում, Կարօ, մեղք մի գործիր:

Կարօ. Օ... Թող ինձ... աչքերս մթնում են, խելքս խաւարում, գիտակցութիւնս մարում: Ամեն անգամ երբ լսում եմ նրա խելագար խօսքերը, երբ տեսնում եմ սրա տանջանքով լի դէմքը, մի տեսակ անհասկանալի յոյզ անցնում է սրտիս մէջ ու ինձ քարացնում:

Քրիստինէ. Ի՞նչ, դու ուզում ես ձեռք բարձրացնել մօրդ վերայ: Թող այդ միտքդ, Կարօ, նա քո մայրն է, քեզ անուցանող և պահող ծնողը: Երկունքով նա քեզ աշխարհ է բերել,

դառն տանջանքներով քեզ անուցել ու մեծացրել: Թող ապրի նա զառնցանքների աշխարհում մինչև որ օրհասական սև մահը կը փակէ նրա արհաւիրքով լի աչքերը:

Կարօ. Օ, երկինք, խնայիր ինձ... Բայց ոչ, ոչ աւելի լաւ է մահաբեր գնդակը վերջ դնի նրա տանջալից կեանքին քան ընկնի վայրենի քրդերի ձեռքը և ծաղրի առարկայ լինի: Օ, Տէր, խնայիր ինձ... (Առաջ է անցնում դէպի մայրը):

Խաթուն. Ո՞վ ես դու, քուրդ թէ հայ: Օ, նայիր այստեղ... մեռելներ, մեռելներ... որոնք յարութիւն կառնեն: Այ տես, ինչպէս ժպտում են նրանք, ծիծաղում ու սուր ատամները կրճրտեցնում... Վարդեր փռեցէք, սպիտակ շուշան ցանեցէք, որ նրանք ապրեն:

Կարօ. (Ծուռկ չոքելով մօր առաջ և բռնելով նրա ձեռքը): Օ, մայր, իմ սիրելի, իմ անգնահատելի մայր: Թող մի բոլորէ քո թորշոմած ճակատիդ մի համբոյր դրօշմեմ: Խոր ակոսներով պատած տանջալից դէմքիդ իմ շրթունքները հպուին, որ իմ աղեկէզ սրտին դարդ չ'մնայ, կարօտով լի հոգիս խաղաղուի ու այնպէս քո սիրասուն գաւակն էլ քեզ հետ միանայ: Դու պիտի մեռնես, մայր իմ, քո հարազատ որդու ձեռքից: Կարօն այլևս չի կարող տանել այն տանջանքները, որ կրում ես դու և թող մարդիկ չ'դատապարտեն ինձ իմ վարմունքի համար: (Բարձրացնում է ատրճանակը):



Քրիստինէ. Օ, խնայիր ինձ, ձեռք մի բարձրացնի մօրդ վրայ:

Կարօ. Դատաւետեցէք ինձ, անէծքի տաւաթ թափեցէք զլիւս, բայց նա պիտի մեռնի: Համբուրիր, մայր իմ, համբուրիր ինձ, համբուրիր քո դժբաղդ որդուն, որ պապական սիրտս հովանայ, բորբոքուած ուղեղս հանդարտուի:

Խաթուն. Հա... հա... հա... համբուրիր... ի՞նչու, ի՞նչ պատճառով... հեռացիր ինձնից. հա... հա... հա...

Կարօ. Օ... Վայ ինձ, եղբւկ դժբաղդ Կարօյին (Թնդանօթի որոտ) բայց արդէն սկսուած է դժոխքը: Տէր, ներիր ինձ (արձակում է ատրճանակը և տեղն ու տեղը սպանում: Խաթունը մի քանի պտոյտ է անում և ընկնում):

Քրիստինէ. Ի՞նչ արիր, վա՛յ ինձ: (Ընկնում է դիակի վրայ և համբուրում):

Կարօ. (Մօտենալով և ձեռքը դնելով կրծքին): Ամեն ինչ վերջացած է: Դժբաղդ որդու գնդակը ճիշտ սրտին է կպել և մի վայրկեանում նրա տանջանքներին վերջ դրել: Վեր, Քրիստինէ, վեր կաց: Դրա բաղմաշարձար հոգին այլ ևս չի տանջուի: Յնորամիտ մտքերը այլ ևս չեն յուզի նրան ու նրա միտքը խաւարեցնի, այլ նա կերթայ գուցէ աւելի լաւ աշխարհ, ուր նրա տխուր մարմինը այլ ևս չի զգայ ոչ վիշտ, ոչ տանջանք, ոչ հոգեկան վրդովմունք... (ծունկ չոքելով և համբուրելով ձախառը): Ո՛հ, մայր, իմ թանկագին և

դորովագութ մայր, թող այս իմ վերջին համբուրը մեղմացնի սրտիդ կսկծի թափը ու հոգիդ ների որդուդ այս ոճրագործ քայլը... (Վեր կենալով): Մնաս բարե... մայր իմ... մնաս բարե...

Քրիստինէ. Իսկ դիակը, Կարօ, մի՞թէ թողնելու ես այստեղ վայրագ քրդերի անարգանք, վայրի գաղաններին կերակուր:

Կարօ. (Դառն ժպտալով): Նայիր, Քրիստինէ, այս նահատակներին, տես, ինչքան մայրեր ու զաւակներ անշարժ պարկած են այս հովտում: Այդ կանայք էլ որդիք ունեն, քոյրեր ու եղբայրներ, որոնք ողբում են նրանց մահը և դիակին իսկ չ'արժանանում: Մենք ի՞նչով ենք արժանաւոր քանց այդ մայրերի զաւակները... Իմ մօրս դիակն էլ պէտք է մնայ այդ նահատակների դիակների հետ, բաց երկնքի տակ և արհաւիրքով լի աչքերով նայի դէպի անհունութիւնը, ուր չի հասնում մեր մտքի թռիչքը: (Թնդանօթների որոտ): Բայց դժոխքն է սկսում:

Բեմի յետելից ձայն. Է՛յ, Կարօ, բարձրացիր լեռը, գալիս են քրդերը, զուլումն է տիրում:

Կարօ. Քաջացէք, իմ եղբայրներ ու քոյրեր, Կարօն գալիս է ձեզ հետ մեռնելու:

(Բարձրանում են լեռները):

Թնդանօթների և հրացանների ձայները սաստկանում են, տեղ տեղ բոցեր են երևում և ամբողջ տեսարանը կամաց կամաց կրակի մատնւում: Մի խումբ քրդեր բարձրանում են լեռները, վազում, վազվզում, ընկնում:



Տ Ե Ս Ի Լ Գ.

Ներս են մտնում Հուսէյն բէկ և քրդեր:

Հուսէյն բէկ. Տղէքք, այս կողմն անցէք: փառք Ալլահին, Սասունն էլ քար ու քանդ եղաւ և քար քարի վրայ չ'մնաց: Մերոնց ոռւմբերը նրանց ժայռերը փշրեցին և մի հոգի էլ չթողին կենդանի: Լսում էք, նրանց կողմից հըրացանաձգութիւնը հետզհետէ պակասում է, ուր որ է ամեն ինչ կը լռի և նրանց աւարը մեր ձեռքը կը հասնի: Ա՛խ, եթէ ես Կարօյին կենդանի ձեռքս ձգէի, այն ժամանակ ես գիտէի թէ ինչ սոսկալի տանջանքներ կը տայի նրան: Յառաջ իմ քաջեր: (Կարօն և Քրիստինէն երևում են բեմի խորքում, Կարօն հրացանը ուղղում է դէպի Հուսէյնը և արձակում: Հուսէյն բէկը օրօրում է և սպանւած ընկնում):

Քրդեր. Ալլահ, Ալլահ...

Հուսէյն բէկ. Վագեցէք, հասէք կոտորեցէք գեաւուրներին... օ՛... Ալլահ... (Ընկնում է. քրդերը սրերը մերկացրած վազում են առաջ):

Տ Ե Ս Ի Լ Դ.

Ներս են մտնում Կարօն և Քրիստինէն:

Կարօ. (Ոտքը դնելով Հուսէյն բէկի կրծքին): Իմ վերջին գնդակին զոհ գնաց իմ ոսոխ թշնամին՝ Հուսէյն բէկը, մինչդեռ այդ թանկագին գնդակը ես ուրիշ նպատակի համար էի պահում: Բայց

ի՞նչ օգուտ Քրիստինէ, որ սպանուեց Հուսէյն բէկը: Քրդերը ջարդեցին հայերին, հայերը ջարդեցին քրդերին: Երկուստէք թափեցին արիւն, ի՞նչու, ի՞նչու համար...

Քրիստինէ. (Նստելով ժայռի վրայ): Օ՛, Կարօ, ես այլևս չեմ կարող քայլել, ես ուժասպառ եմ եղել: Շունչս կտրւում է, ես խեղդւում եմ, օդ տուր ինձ, օդ, ես չեմ կարողանում շնչել...

Կարօ. Օ՛, իմ աննման Քրիստինէ, քո Կարօն այժմ անձեռնահաս է քեզ օգնելու: Նայիր շուրջդ, չորս կողմը հրեղէն լեզուներն են լափում Սասունին ու վայրենի քրդերը ոռնում մեր շուրջը...

Քրիստինէ. Տուր ձեռքդ և բարձրացրու ինձ: Ես ուզում եմ մի հայեացք գցել սիրուն Սասունի անվեհեր ժայռերին: Այդպէս: Օ՛, ինչպէս բոցավառւում է նա...

Կարօ. Այո, Սասունը այրւում է բիրտ, անկիրթ մասսայի առաջ և այնտեղ հայի անմեղ արիւնը թափւում: Մեր սիրուն անդաստանը այժմ կոխկորդում են քրդերը: Կուլտուրայի դըրօշը, որ մենք ուզում էինք բարձրացնել, խորտակւում է վայրագութեան առաջ և տգիտութեան սև ու մութ խաւարը նորից թագաւորում այնտեղ...

Քրիստինէ. Այո, արշալոյսի փոխարէն սև խաւարն է իշխում Սասունին և կրկին ուժի ու վայրագութեան ըէժիմը թագաւորում... Մեր



քաջերը ամենքը կոտորուեցան, ամենքը մեռան ու ես էլ այս վայրկենիս ուզում եմ մեռնել, հանգստանալ, ննջել, ինչպէս ահա այն նահապետները...

Կարօ. Այո, ննջել ինչպէս այն նահապետները: Քնել, հանգստանալ, չլսել թշնամու գոռաւանդ, չզգալ աշխարհային վիշտն ու տառապանքը, ցան ու տանջանքը... Բայց չէ՞ որ մատաղ կեանքը չի կարելի խաւարեցնել, վարդի կոկոնը դուրս պոկել, սոխակի դայլայլիկը ընդհատել, արևի արշալոյսը մթնացնել... Օ, Քրիստինէ, ես էլ եմ ուզում մեռնել... մեռնել քեզ հետ, բայց երբ ես ըմբռնում եմ այդ մահի անտեղիութիւնը, նրա աննպատակ լինելը—եւս սոսկում եմ, զարհուրում եւ ինձ հաշիւ չեմ կարողանում տալ: Բայց միւս կողմից երբ չարաբաստիկ հանգամանքները ի նկատի եմ առնում, երբ տեսնում, հասկանում եմ, որ կեանքը աւելորդ մի բեռն է, անօգուտ ժամանակի մի հոսանք, այն ժամանակ ես գալիս եմ այն եզրակացութեան, որ աւելի լաւ է մեռնել, քան թշուառ կեանքը շարունակել:

Քրիստինէ. Այո, ես քեզ հասկանում եմ: Ապրել միայն նրա համար, որ կարողանանք ուրիշներին օգտակար լինել, իսկ քանի որ այդ հնարաւորութիւնը խլում են մեզանից աւելի լաւ է մեռնել:

Կարօ. Այո, մեռնել, մեռնել գիտակցօրէն:

Մահի առաջ մի վայրկեան անգամ չ'դողալ, չ'սարսափել, զգալով հանդերձ, որ այն, ինչ որ կարողացանք անել մարդկութեան տոաջ, արինք:

Բեմի յետեւից քողեր. Ալլան... Ալլան...

Քրիստինէ. Ահա գալիս են քրդերը, զրկուենք ու այս սուրը երկուսիս կուրծքը պէտք է պատառէ:

Կարօ. Իմ աննման Քրիստինէ:

Քրդեր. (Ներս վազելով): Անձնատուր եղէք:

Կարօ. Օ, ոչ, Կարօն կենդանի ձեր ձեռքը չի ընկնի: Վազիր, Քրիստինէ, վազիր...

Քրիստինէ. Բայց ո՞ւր, ես չեմ կարող:

Կարօ. Ահա այն ժայռի գլուխը, որտեղ մենք կը գտնենք մեր մահը:

Քուրդ. Անձնատուր եղէք, եթէ ոչ գնդակահար կը լինէք:

Կարօ. (Բարձրանալով եւ կանգնելով անդունդի եզրին): Ոչ մի քայլ առաջ: (Գրկելով Քրիստինէին): Այժմ տո՛ւր ձեռքդ: Ահա այն մահը, որ մենք փնտռում էինք: (Հրացանի ձայներ):

Քուրդ. Անձնատուր եղէք: (Կարօն ու Քրիստինէն ընկնում են ցած):

Քրդեր. (Ներս թափուելով ամեն կողմից): Ամա՛ն, Ալլան, Ալլան, ափսոս իզիթ:

Վ. Ս. Բ. Ս. Գ. Ո. Յ. Բ.





## ՆՈՅՆ ՀԵՂԻՆԱԿԻ ՁԵՌԱԳԻՐ ՊԻԷՍՆԵՐ

Որոնք թոյլտուած են ներկայացնելու Կովկասի  
շրջանում:

1. Անիի Կործանումը, դրամա 5 գործ. 7 պատկերով
2. Աշոտ Երկաթ, դրամա 5 գործ. 7 պատկերով
3. Խելագարը, դրամա ներկայ էւանքից 5 գործ.

Այդ պիէսների ներկայացման համար պէտք է  
ստանալ հեղինակի թոյլտուութիւնը:

ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿ Է

## ԱՇՈՏ ԵՐԿԱԹ

Պատմական վէպը, փոփոխած և ճոխացրած

4-րդ տպագրութիւն, պատկերազարդ, գինը հա-  
տի տակ մէկ ըուբլի: Գումարով գնողը մինչև  
լոյս տեսնելը ստանում է նշանաւոր գեղջ:

Շուտով մամուլի տակ կ'մտնի

նոյն հեղինակի

## ԱՐԱՔՍՆ Է ԼԱԼԻՍ

Մեծ վէպը, բաղկացած երեք մասից:

Մասն ա. ԱՆԽՈՐՏԱԿԵԼԻ ԱՄՐՈՅԸ մասն բ.  
ՃԱՀԻՃԸ ՇԱՐԺԻՈՒՄ Է, մասն գ. ԼՈՒՍՈՅ ՃԱ-  
ՃԱՆՁՆԵՐ: Գինը 1 ը.—50 կոպ. կանխորէն  
բաժանորդ գրուողը վճարում է ճանապարհա-  
ծախսով 1 ըուբլի:

Հեղինակի հասցէն՝ Тифлисъ. Приказная  
ул. № 12. Баграту Айвазянцу.



ԲԱԳՐԱՏ ԱՅՎԱԶԵԱՆՅԻ ԱՌԱՆՁԻՆ ԳՐԳԵՐՈՎ  
ՏՊՈՒԱԾ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ.

1. Աշոտ Նրկաթ, պատմական վէպ  
ա. և բ. մասն 3 տպագ.  
(սպառուած) . . . . . դ. 1 ռ. —
2. Հիւսիսի Արծիւը, պատմ. վէպ  
1801—1829 թ. (սակաւաթիւ) դ. 1 ռ. —
3. Անիի Կործանումը, պատմ.  
վէպ, ա. և բ. մասն հրատա-  
րակութիւն Գուտենբերգ զը-  
րախանութի . . . . . դ. 1 ռ. —
5. Տանջանքի բովից, վէպ իրա-  
կան կեանքից (սպառուած) . դ. — 30 կ.
5. Սև յաղթանակ, վէպիկ (սա-  
կաւաթիւ) . . . . . դ. — 25 կ.
6. Աչքերը խօսում են, զրոյց,  
պատկերազարդ . . . . . դ. — 25 կ.
7. Մութ խորշերից զրոյց (սպա-  
ռուած) . . . . . դ. — 5 կ.
8. Պիատրա Արսա կամ խանձու-  
ած քար, Կարմեն Սիլվայից,  
թարգմ. (սպառուած) . . դ. — 5 կ.
9. Սասունը Այրւում է, զրամա  
5 գործ. . . . . դ. — 50 կ.



Վերոյիշեալ գրքեր ցանկացողները պիտի  
դիմեն հեղինակին հետեւեալ հասցէով Թիֆլիս  
Приказная ул. № 12, Баграту Айвазянцу.



Հայաստանի Ազգային գրադարան



NL0420578



19.408

